

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՎՈՂԵՍԻՍԻ
ԱՐՎԵՍԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
ИНСТИТУТ ИСКУССТВ

NATIONAL ACADEMY OF SCIENCES OF
THE REPUBLIC OF ARMENIA
INSTITUTE OF ARTS

КОМИТАС
СОБРАНИЕ СОЧИНЕНИЙ
ТОМ ЧЕТЫРНАДЦАТЫЙ
МУЗЫКАЛЬНО-ЭТНОГРАФИЧЕСКОЕ
НАСЛЕДИЕ

КНИГА ШЕСТАЯ

АРМЯНСКИЕ НАРОДНЫЕ И АШУТСКИЕ ПЕСНИ, НАИГРЫШИ,
ТУРЕЦКИЕ ПЕСНИ, КУРДСКИЕ ПЕСНИ И НАИГРЫШИ

Составление и комментарии

Р. Атаяна

Редакция Р. Атаяна, Г. Геодакяна

КОМИТАС
The Complete Works
Volume Fourteen
MUSICAL ETHNOGRAPHIC HERITAGE
Book 6

ARMENIAN FOLK AND ASHUGH SONGS AND INSTRUMENTAL MELODIES
TURKISH SONGS, KURDISH SONGS AND INSTRUMENTAL MELODIES

Edited by R. Atayan

G. Geodakyan

Издательство «Гитутюн» НАН РА, Ереван
"Gitutyun" Publishers, Yerevan
2006


Կ Ո Մ Ի Տ Ա Ս
ԵՐԿԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ
ՏԱՄՆՉՈՐՄԵՐՈՐԴ ՀԱՏՈՐ

ԵՐԱԺՇՏԱԿԱՆ-ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ

Գիրք 2

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՎ ԱՇՈՒՂԱԿԱՆ
ԵՐԳԵՐ, ՆՎԱԳՆԵՐ
ԹՈՒՐՔԱԿԱՆ ԵՐԳԵՐ, ԶՐԴԱԿԱՆ ԵՐԳԵՐ ԵՎ
ՆՎԱԳՆԵՐ

Կազմեց և ծանոթագրեց՝
Ռ. Աթայան
Խմբագիրներ՝ Ռ. Աթայան, Գ. Գյոդակյան



ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն
Երևան 2006

ԴՏՀ 78(479.25)
ԳՄԴ 85.313(2Հ)
Կ - 685

*Հրատարակության ծախսերը հոգացել է Գլենդեյլի (ԱՄՆ)
Լարք երաժշտական ընկերակցությունը, որի համար Արվեստի ինստիտուտը
իր երախտագիտությունն է հայտնում այդ հիմնարկությանը և մրա դեկավար
պատվարժան պրոֆ. Վաչե Պարսումյանին*

*The Institute of Arts expresses deep gratitude
to the Lark Musical Society of Glendale (California, USA)
and its Director, professor Vatsche Barsoumian
for their financial support
to carry out the publication of this volume.*

Կ 4905000000
703(02) -2000
ISBN 5-8080-0592-2

ԳՄԴ 85.313(2Հ)

© ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտ, 2006



ՆԱԽԱԲԱՆ

Կոմիտասի ազգագրական-երաժշտական ժառանգության ներկա՝ 6-րդ զինքը՝ *Երկերի ժողովածու, հատոր Տասնչորս*, մախորդ հինգ գրքերից առանձնանում է նյութերի ճյուղային-ժամրային բազմատեսակությամբ. ներկա հատորի առաջին կեսը դարձյալ հատկացված է հայ գեղջկական երգերին, իսկ երկրորդ կեսն ընդգրկում է երաժշտագետի հավաքած ու գրառած արևելահայ ու արևմտահայ ոչ մեծաքանակ քաղաքային ժողովրդական երգեր, երկու աշխարհիկ տաղ, հայ աշտուկական երգեր, մվագարանային եղանակներ, մաս ալլազգի՝ քրդական ու թուրքական ժողովրդական ստեղծագործություններ:

Ներկա հատորով լրանում է երաժշտագագրական այն նյութերի հրապարակումը, որոնք երկար տարիների ընթացքում մանրակրկիտ հետազոտության արդյունքով մեզ հասողվել է հավաքել Կոմիտասի պահպանված տետրակներում, ծոցատետրիկներում և բազմաթիվ տարանջատ թղթերի վրա գրված, հաճախ «այաշտային» գրությամբ ուրվագրված:

Ինչպես մախորդ գրքերում, այստեղ ևս երգը և իր տարբերակները համարակալված են որպես ազգագրական առանձին միավորներ: Նման համարակալումով կոմիտասյան երաժշտագագրական առ այսօր հայտնաբերված ժառանգությունը ներկայանում է շուրջ 1600 միավորով, որն, արդարև, մի քանի անգամ ավելի է մինչ այժմ եղած մրա ազգագրական գրառումներից: Անշուշտ, հարցը քանակությունը չէ միայն, այլ մաս գեղարվեստական-գիտական կշիռը, որով այդ ժառանգությունը *հայ ազգային ժողովրդաերաժշտական ընդհանուր ժառանգության մեջ բացառիկ պատկանելի և պատշաճ տեղ է գրավում:*

Ներկա հատորում նյութերը դասավորված են ըստ ժամրային ճյուղերի, այլազգի երգերը և քրդական որս մվագներ առանձնացված են հատորի վերջում: Հատորը պարունակում է 221 սնուշ, որոնց մեծագույն մասը լույս է տեսնում առաջին անգամ: Ստորև առաջին անգամ տրվում են հատորի նյութերի գիտական հակիրճ նկարագրությունն ու արժեքավորումը: Նշված են ամեն մի ստեղծագործության բնագրային աղբյուրը և դրանց ինչ-ինչ հատկանիշները պարզաբանող վերլուծական դիտողություններ:

Ինչպես հայտնի է, Կոմիտասի հավաքած երգերի ճնշող մեծամասնությունը ներկայացնում է Հայաստանի արևելյան շրջանները: Այստեղ գեղեղված գրառումները պարունակում են միայն արևմտահայ ժողովրդական երգեր, որոնց մի զգալի մասը Կոմիտասը գրի է առել վանեցի բանահավաք-ազգագրագետ *Տիգրան Չիքունուց* (1881 – 1960):

Տ. Չիքունին Կոմիտասին նվիրված իր հոդվածներում և հուշերում, բարձր գնահատական տալով երաժշտագետի անձնավորությանն ու հավաքչական գործունեությանը, ամենայն մանրամասնությամբ գրել է մաս իրենց սերտ բարեկամության և համատեղ աշխատանքի մասին: Կոմիտասն, իր հերթին, իր «Հայն ունի ինքնուրույն երաժշտություն» հայտնի գրության մեջ (1913) հայ նշանավոր բանահավաքների թվում հիշատակել է մաս Չիքունու անունը:

Այդ երգերի մասին ինքը՝ Չիքունին, գրել է, որ «վանի շրջապիտու բազմաթիվ գավառների, գավառակների ու գյուղերի», ինչպես և բուն քաղաքի երգերն էին, «տղա տարիքես լսած-ծած», հասունությանն համընթաց անձեցուցած, թծախնդրորեն գրի անցուցած՝ ազգագիրի գլուխ»: և հիշատակել է Կոմիտասի՝ դրանց տված ընդհանուր գնահատականը՝ «հարազատ հայկական և բազմազան եղանակներու ոսկեհանք»:

Չիթունին Կոմիտասին հանդիպել է 1909-ի սեպտեմբերին Էջմիածնում կաթողիկոս Իգնիլյանի օժանդակով օրերին: Երկու երեկոյի ընթացքում նա Չիթունուց գրի է առել շուրջ «մեկ հիսնյակ» երգ, որոնք, ըստ Չիթունու, ընտրված են եղել «Սպարկերտի, Կարկատի, շրջակա գավառակներու և Վանա կույս միջավայրեն ու գրեթե քնավ չլսված երգերն»: Աշխատանքը շարունակվել է 1914-ին Կ.Պոլսում: Չիթունու պատմելով, այդ տարվա հոյեմբերին մեկ ամիս երեկոները աշխատելով, Կոմիտասը նրանից գրառել է «Վասպուրականի ժողովրդական երգերն մոր հիսնյակ մը, որոնց մեկ մասը մանկական երգեր» («Հայրենիք», 1936, 12, էջ 87), իսկ նույն տարվա դեկտեմբերին «գիշերաջան մվիլումներով» նրանք «մեջտեղ են դրել քառասունի չափ մանկական երգեր»:

1922-ին մտահոգվելով, որ Կոմիտասի հիվանդության պատճառով այդ գրառումները կարող են կորսվել, Չիթունին նույն երգերը երգել է Միհրան Թումանյանի համար, ավելացրել դրանց «մի քանի տասնյակ երգ ու խաղասացք», և վերջինս այդ քոլորը գրի է առել:

Հնարավոր է, որ Չիթունու երգածից Կոմիտասի գրառումներն իրոք մասամբ կորսված լինեն: Ուստի հետագա փնտրուտքն արդյունավետ շարունակելու համար նախ և առաջ կարևոր է ճշգրիտ պարզաբանել դրանց սկզբնական քանակը: Տվյալ դեպքում (ըստ Չիթունու) ստացվում է, որ նրանից Կոմիտասը գրառել է 50+50+40 = 140 երգ, իսկ Մ.Թումանյանը այդ քանակությանն ավելացրել է ևս «մի քանի տասնյակ»:

Իր գրություններին մեկում Չիթունին մի այլ, ավելի «վրդ» թիվ է առաջ բերում: Էջմիածնում Կոմիտասի գրառած առաջին «հիսնյակի» մասին խոսելուց հետո նա ավելացնում է՝ «Երկու հարյուրի չափ (ընդգծումը մերն է՝ Ռ.Ա.) երգացանկին մնացած երգերու ձայնագրումը մնեք պիտի կարենայինք ի զույս համել Իսթամբուլի մեջ («Մարմարա», 12 մարտ, 1960): Իսկ հաջորդ հոդվածում (13 մարտի) այդ թիվը դառնում է որոշակի և հաստատ: Այսպես, մտահոգվելով նաև այն քանով, որ եթե անգամ Կոմիտասի գրառումները չպահպանվեն, հնարավոր է՝ մոռացվի այդ երգերը երգողի անունը, նա գրում է. «Իմ երգածներս... փոքրիկ թերթիկներու վրա ձայնագրված, երբեք չեն կորե «Երգեց Չիթունի, ձայնագրեց Կոմիտաս վարդապետ» մակագրություը: ...Իր մահին հետո և ապագային ալ արդյոք պիտի ճանչցվի՞ այդ *երկհարյուրյակ մը* (ընդգծումը մերն է՝ Ռ.Ա.) մեծ ու պատիկ երգերն երգողի իրավունքը.. Կոմիտասի գործերը հրատարակող Համձախությունին կմնա միշտ՝ լրջորեն նկատի առնել իմ երգածներուս ցանկը...»:

Մամուլում գետնելված այս տվյալներին և դիվաններում պահպանված այլ նյութերին մանրամասն ծանոթացումը մեզ բերում է այն հանդման, որ Չիթունու քազմաթիվ հոդվածներում («Կոմիտաս վարդապետը և մեր ժողովրդական երգը», «Հայաստանի կույնակ», «Նյու Յորք», 1931, ք. 39-41, 45, 48, 50. «Կոմիտասի խցիկին մեջ», «Հառաջ», Փարիզ, 1931, ք. 1611, 1612. «Կոմիտասին հետ», «Հայրենիք», 1936, ք. 12. «Կոմիտաս վարդապետ հիսնամյա հուշերով», «Մարմարա», Կ.Պոլիս, 1960, 9-23 մարտ...) և այլ հեղինակների կողմից դրանց վերապատմումներում (օրինակ, Հ.Միրունի, «Կոմիտասին հետ», «Էջմիածին», 1965, 1966) նրանից Կոմիտասի գրառած ժողովրդական երգերի քանակության վերաբերյալ տեղեկությունները խիստ չարիագանցված են: Նախ՝ անդրադառնալով մանկական երգերին:

Դրանց որպես ժողովրդական նյութերի մասին Չիթունու մի այլ հիշատակում խիստ անորոշություն է հաղորդում գործին. «Անոնց ամբողջ նյութերը ես համած էի իմ և միստար այլ ուրիշներու ձեռքով գրի առնված ժողովրդական մանկական երգաստեղծներն, ապա թե՛ խոսքերը և թե՛ եղանակները Կոմիտասի հետ հոլիցինք ու մշակեցինք, համել եղած տեղերը նյութն ընդլայնելով կամ կրճատելով... Մեր նպատակն էր տպել գաճմոք տետրակներու շարքով մը, գունավոր պատկերազարդ, եղանակներուն խազերովը, որպեսզի անոնք լրիվ ծառայեն մեր մանկապարտիզպանուհիներուն ձեռքին իրր

դասատետր: Այս ծայնագրյալ թերթերը պետք է փնտրել-դուրս հանել Կոմիտասի Իսթանպուլ թղթած և ապա Փարիզ փոխադրված ձեռագիրներուն մեջ» («Մարմարա», 19 մարտ, 1960):

Որ Կոմիտասը մանկական («ճախաղպրոցական») երգեր էր ստեղծում (նույն աշխատանքը հանձնարարելով նաև իր աշակերտներին) և մտադիր էր առանձին պատկերազարդ տետրերով դրանք տպագրել տալ, լավ հայտնի է (տե՛ս նաև ԵԺ 5): Դեռևս 1914-ի հունիսին (Տ.Չիթունու՝ Ռոյնթեր-դեկտեմբերից առաջ սկսած) առաջին տետրն արդեն պատրաստ էր, Կոմիտասը, Փարիզից Պոլիս վերադառնալով, պետք է գրեր դրա առաջաբանը, և տետրը տպագրելու տար (այդ տետրը չի պահպանվել): Հնարավոր է, որ հետագա տետրերը կազմելիս Չիթունու գրած օրինակները, մասնավորապես երգերի խոսքերի համար ելակետային նյութ են տվել Կոմիտասին: Սակայն այստեղ խոսքը ոչ թե ժողովրդական երգերի, այլ, թեևուզև դրանց մեղեդիների օգտագործումով ստեղծված, ինքնուրույն երգերի մասին է: Դա երևում է նաև Չիթունու թերած 39 երգերի ցուցակից, որոնք ոչ թե ժողովրդական երգերի ամուններ, այլ երգի թեման հուշող վերնագրեր են՝ Արևի երգ, Հարսիկ, Երեխայիկ, Հարսամիջի խաղ, Նեցեբոգ և այլն: Կոմիտասի արխիվում Չիթունուց գրառած այսպիսի մի երկու մանկական երգ կա միայն («Արև, արև», «Հեքիաթ, հեքիաթ»), որոնք մյուս ժողովրդական երգերի թվում են, նրանցից առանձնացված չեն եղել:

Առանձնապես տարակուսանքի տեղիք է տալիս Չիթունու ցույց տված մյուս, ոչ մանկական ժողովրդական երգերի քանակությունը:

Բանն այն է, որ Չիթունին իր վերջին հոդվածաշարում շատ պարզ գրել է, թե «1909-ին և 1914-ին Կոմիտաս վարդապետի ձեռքով ծայնագրած երգերուս ամբողջական ցուցակն ունիմ քովս» և նույն տեղում ինքն իսկ հրապարակել է ոչ թե 200 և ոչ էլ 140 կամ 100, այլ (համապատասխանաբար) 48 և 31 – 79 երգի անուն: Բայց դրանցում ակնհայտ կրկնություններ կան, որոնք դուրս թողնելով՝ ստանում ենք ընդամենը 73:

Եթե Կոմիտասի գրառածը ենթակա էր կորսվելու և մասամբ կորսվեց, չէ՞ որ Թումանյանի գրառումները պահպանվել են և ոչ թե 140+ «մի քանի տասնյակ», այլ ընդամենը 56 երգ և դրանց 14 տարբերակները՝ մեծ մասամբ այլ խոսքերով նույն եղանակները: Ուրեմն՝ 79 կամ 73 անուն-ցուցակները ևս չափազանցված են: Չիթունու չափազանցելու «տովորությունը» սրտենդած հաստատում էր նաև Միհրան Թումանյանը:

Ավելացնենք, որ նրա հողվածներում («Մարմարայում») թերված կենցաղային փաստերի նկարագրություններում ևս կան անհարիրություններ: Նկատենք, սակայն, և այն, որ «երգ» ասելով՝ Չիթունին երբեմն հասկանում է սոսկ խոսքը միայն, և հնարավոր է, որ մասնավորապես Մ.Թումանյանը նրանից գրառած է եղել «ամեղանակ» ժողովրդական երգեր ևս, թեև ոչ, իհարկե, հարյուրներով:

Չիթունու հողվածաշարում ըստ ամենայնի էական են հետևյալ տողերը, որ նույնպես կարիք ունեն որոշ դիտողությունների: «Երգածս երգերու առաջին խումբին մեջ, – գրում է Չիթունին, – հատկապես Վարդապետին ուշադրությունը գրավեցին Սասանց տուն-իս «Անխոստ»-ները ու «Հիշան»-ները, հետո՝ «Պուտկով փլավ ըն եյե», «Լուս ու ճանճ», «Օ, տալ Ակո», «Սանդ կրծիծեն», «Մուկաց Միրզեն», «Դե հե, զոնզո, զոնզո» [այսպե՛ս «էգ բարև» և մյուս հարսանեկան երգերը՝ թիվ 5, 6: Սակայն իր խոր հիացումը բնեռն առաջին առիթով Փիդուզեն և Իլիլի-տիլիլի երգերում ու եղանակներում վրա... մի-մի գոհարներ են, իբր գավիշտ և իբր եղանակ մնանը չունեն»:

Հիրավի, «Մասունցի Դավիթ» վեպից նոր հայտնվող երգային ամեն մի հատված խիստ կարևոր է հայ ժողովրդաեղանակական ժառանգության մեջ, նույնքան կարևոր են և ծիսական, մասնավորապես գավիշտական երգերը, որոնցից ընդհանրապես քիչ բան է հավաքված: Չիթունու ցուցակներում «Մասունցի Դավիթից» կա չորս անուն՝ «Էս օր

երագ ըմ նմ տխեր», «Ափսոս ու հազար ափսոս», «Չեռնիկ, դու կոտոր կենը», «Հիշամ զԱստված»:

Մեզ քվում է, որ այս չորս անունները զետեղելով իր ցուցակում՝ Չիթունին դրանք նկատի է ունեցել որպես քանահյուսական-խոսքային, քայց ոչ մաս երաժշտական միավորներ: Այլապես, նույն չորս «երգը» մա երգած կլիներ մաս Մ.Թումանյանին: Մինչդեռ Թումանյանի գրառումներում կա միայն մեկը՝ «Ափսոս»-ը, այն էլ մոտավորապես երգված է «ես օր երագ ըմ նմ տխեր»-ի եղանակով, որն իր հերթին գտնվում է Կոմիտասի գրառումներում (այդ երգի մասին մենք խոսել ենք ԵԺ 10-ում): Եթե անգամ մյուս հատվածները և երգել է, ապա, ամենայն հավանականությամբ, աշխատել է հարմարեցնել մեկ նույն եղանակին (ինչպես մերկայացված է Թումանյանի «Ափսոսը») և երևի այդ պատճառով ոչ Կոմիտասը, ոչ էլ Թումանյանը չեն գրանցել¹:

Հարաանելիս երգերը հակառակ պատկերն են տալիս. Չիթունու ցուցակում դրանք հենց երեքն են, իսկ Կոմիտասի և Թումանյանի գրառումներում՝ վեցը (այս հանգամանքը որոշ անվտանգություն է առաջ քերում մաս Չիթունու այն հավաստման նկատմամբ, թե Կոմիտասի և Թումանյանի գրառած երգերի ամբողջական ցուցակը մա ունեցել է իր ձեռքին): Ինչ վերաբերում է «Մոկաց Միրզային», Կոմիտասի թղթերում Չիթունուց գրառված այդպիսի երգ չկա, իսկ Թումանյանի գրառումներում առկա նույնանուն երգի մոտ Թումանյանի ձեռքով նշված է՝ «Գ-րի է առնված Կոմիտասի կողմից 1914թ. Փարիզում»: Խնդրի տարբերումն այս է. 1914 թվականի *հուլիսի 6-ին* (դարձյալ ճոյեմբեր-դեկտեմբերից առաջ) Փարիզում, այլ ոչ թե Կ.Պոլսում Կոմիտասն իր ձեռքով Մարգարիտ Բարայանի նուտատետրում գրել է «Մոկաց Միրզային» եղանակը և տեղումտեղը հորինած թեթև ներդաշնակումը (զետեղված է ԵԺ 1-ում): 1922-ին Փարիզում Չիթունու երգերը գրի առնելիս Թումանյանը «Մոկաց Միրզան» նրանց չի գրել, այլ արտագրել է Կոմիտասի ձեռագրից, որին մա տեղյակ է եղել: Դա «Մոկաց Միրզային» այն տարբերակն է, որ Կոմիտասը մոխապես երգել և գրառել է տվել ճայնապանակի վրա (տե՛ս ԵԺ 1 և «Ազգագրական ժողովածու», հատ. 2, էջ 97, այս երկու աղբյուրներում բնականաբար կան դիֆեր տարբերություններ)²:

Կոմիտասի թղթերում գտնվեց «Մոկաց Միրզային» մի այլ տարբերակ ևս, որ դարձյալ Չիթունուց չէ, այլ, ինչպես պարզվեց համապատասխան նյութերի հետազոտությունից, Կոմիտասը գրի է առել 1904-ին Մոկքի Գիսնեկան գյուղի բնակիչ Նախտ Արրահամյանից, որից գրառել է մաս «Մասունցի Գավթի» վերջին երգերի մի մասը (տե՛ս նույն «Ժամրային» ժողովածուում զետեղված «Մոկաց Միրզա» երգի ծանոթագրությունը, ԵԺ 10):

Այս բոլոր դիտողություններից հետո կարևորը վերջապես այն է, թե ներկայումս Կոմիտասի դիվանում Չիթունու երգած ինչքան և ինչ նյութեր կան:

Կոմիտասի դիվանում հաջողվել է հավաքել Չիթունու երգածից գրառված 65 երգ՝ երգերի տարբերակները և կրկնություններն էլ հաշված: Դրանց մեծ մասը, գրված իրոք մանր թղթերի վրա, մատիտով, կիսասևագիր, ուղղումներով, Կոմիտասի և Վահան Տեր-Առաքելյանի համատեղ կատարումով «Կալերգ և սայլերգն» է, որը կարող էր ճայնագրված լինել ամենաուշը 1907-1908 թվականներին:

¹ Բոլորովին այլ, ինքնուրույն հարց է Կոմիտասի գրառած «ես օր երագ ըմ նմ տխեր» և Թումանյանի «Ափսոս» երգերի եղանակների որոշ տարբերությունների հարցը, որը, սակայն, իրերի դրությունը չի փոխում, այդ մասին մանրամասն՝ ծանոթագրություններում:

² Մոկաց Միրզային՝ Կոմիտասի կատարումով ճայնագրվածը -6-12967, ցավոք սրտի. ոչ ծամանակի, ոչ էլ տեղավայրի մասին որևէ նշում չունի, քայց շրջերեսին Կոմիտասի և Վահան Տեր-Առաքելյանի համատեղ կատարումով «Կալերգ և սայլերգն» է, որը կարող էր ճայնագրված լինել ամենաուշը 1907-1908 թվականներին:

40-ն են Ա 1909թ. գրառումներ, և պրակի 1-ին էջին, հակառակ Չիթունու պնդման, Կոմիտասի ձեռքով մաքուր սևաթանաք (և փոքր-ինչ հանդիսավոր) գրված է՝

Վ ա ն ե ց ի
Տ ի գ ր ա ն Չ ի թ ու ն ի
Չ ի թ ճ յ ա ն

1909թ. 11 սեպտեմբերի.
Ս.Էջմիածին

Վերջին քերթիկի վրա կան Կոմիտասի ձեռքով հետևյալ ծանոթագրությունները.

«Ձեռնգ, զոնգ – զարնել, շեշտել եղանակը:

Ճռա – հողն աման, 'զնարի:

'կ քեած կիղնա –

Լպզորել – լպզոր տալ, հարևանցիտրեն:

Երիկ-երիկ – եռանդով:

Շաղախելով – բաշխելով):

«Բոլոր տողերը կրկնում են երկու-երկու անգամ թե՛ պարապետը և թե՛ պարը»: Խոսքը պարերգերի մասին է, այդ կրկնություններն առանձնապես խմամքով նշանակված են թումանահի գրառումներում:

Մնացած 25 երգերը, որ որևէ կերպ վերնագրված կամ պրակավորված չեն, հայտնաբերվեցին արխիվի թ. 630 ծրարում և, դատելով բովանդակությունից, Պոսի գրառումներ են: Մրանք, ցավոք, ավելի ևս սևագիր են, երբեմն ամավարտ: Մինչդեռ այլ նյութերից հայտնի է, որ կատարումից շտապ գրանցելիս Կոմիտասը որոշ մանրամասներ, որոնք հաստատապես կարելի է վստահել հիշողությամբ, ժամանակը խնայելով գրի չէր առնում և հետո միայն, գրածը մաքրագրելիս, ավելացնում էր վերջնական տեքստում: Եղև՞ նա արդյոք այս երգերի հետագա մաքրագրություններ, թե՞ ոչ, դժվար է ասել: Ներկայումս դիվանում Չիթունուց գրած երգերից մաքուր արտագրված կա միայն «Սասունցի Դավիթ» վեպի «Երագ» հատվածը, որից մի օրինակ Կոմիտասը մաս հատուկ գրել և ուղարկել է Չիթունուն հետևյալ մակագրությամբ՝ «ժուգօտ լսելով՝ երգեց Տիգրան Չիթունի, ծայնագրեց Կոմիտաս վարդապետ. Մեներգ, դյուցազններգ):

Բացառված չէ, որ Չիթունուց գրառված կոմիտասյան երգերի մի քանի նոր հայտնաբերումներ ևս լինեն: Սակայն, անկախ քանակությունից և, նույնիսկ, երբեմն խիստ սևագիր վիճակից, հայտնաբերված երգերը թե՛ իրենց բազմազան բովանդակությամբ և թե՛ իրենց տեղավայրի հանգամանքով Կոմիտասի բարձրարժեք գրառումներից են, այս տեսակետից դժվար է մայրնդություն տալ դրանցից որևէ մեկին կամ մի քանիսին:

Դրանց ժանրային ընդգրկումը ներկայումս է աշխատանքային՝ դաշտային և սանդի մեկական երգերով, հարսանիքի և վիճակահանության երգերով և մեկ ավետիսով, որ հորինված է իումոթի ոգով, ընդհանրապես կատակային, զավեշտական ու երգիծական երգերով, մի քանի մանկական մնուշներով և, ամշուշտ, քմարական-սիրային երգերով ու բազմաբնույթ պարերգերով: Մի շարք երգեր հայտնի էին իր՝ Կոմիտասի գրառած կամ Ս.Սելիքյանի հրապարակած տարբերակներով, մեծ մասամբ, սակայն, թե՛ Կոմիտասի և թե՛ ողջ հայ երաժշտագագրական ժառանգության մեջ նորույթ են:

Վերջիններից նշենք «Նաքիկո» պարերգը, որ մարտաշունչ «Ջար-զընգը» պարերգի մի մնամակ է (առանձին «Ջար-զընգը» ևս կա), «Հոյնարո»-ների տարբերակները, հետաքրքրական է չքեր կնոջ՝ մածոր եռաշարով ընթացող ողբազին երգը, որ, ամենայն հավանականությամբ, ավանդական է և հիշեցնում է ծիսական ողբի երգերը.

գեղեցկուհի Փիրուզի մասին կատակերգը, որի կատարումը Կոմիտասը նշել է «գեղուն կոկորդոլ, հագագուլ», երբեմն՝ «ճիշով», ձայները իրարու խառնելով, սահեցնելով, որ իրոք բացառիկ հետաքրքրական է (այս երգն իր մեղեդիական կառուցվածքով և շատ անսովոր է, արտաբնական այն մոտեմունտ է 20-րդ դարի ավանգարդիստական մեղեդիներին): Նշանավոր են «Հինգ էծ ունեն» և «Կոտ ու կեսը կորել ունեն» երգերը, որոնք ժամանակին Կոմիտասի միջոցով արագորեն ու լայնորեն տարածվեցին Հայաստանի դպրոցներում, մանկական ձիախաղի «Աղա լաճ» երգը, «Հեքյաք-հեքյաք»-ը թև ավանդական պարզագույն ելևէջներով է կառուցված, բայց կարևորվում է նրանով, որ ամբողջացնում է Գ.Շերեմցի «Լամա սագ» (Ա) ժողովածուում հրապարակված «Լաց և խնդում» կոչվող «Պապկե հեքյաքը»: Ընդհանրապես այս երգերի վաղեմությունը և րմիկ վաճառ լինելու հանգամանքը երևում է նրանից, որ մի զգալի մասի քանաստեղծական տեքստերը կամ վերջ հիշատակված և քանահյուսական այլ ժողովածուներում: Ինչ վերաբերում է «Սասնանց Տան» «Երազ» հատվածին, ինչպես ասել ենք, դա հայ վիպական երգաստեղծության բացառիկ արժեքավոր մտուշներից է: Տ.Չիբրուցու գրառած երգերից մեկը՝ «Բլիխ-տիլիմ» (բայց ոչ մաս «Փիրուզեն», ինչպես կարծում է ինքը՝ Չիբուզին), Կոմիտասը բարձր արվեստով մշակել է երգչախմբի համար և Կ.Պոլսի համերգներում հաջողությամբ կատարել:

Չիբուցուց գրառված երգերը գմահատելի են մաս իրենց խոսքային տեքստերի բարբառային հասկանիչներով: Այս առումով պետք է ամիստալ, որ հայտնաբերված գրություններում մի շարք երգերի խոսքերը միայն մեկ տուն են: Արշայր ինքը՝ երգողը, դրանք չի՝ թվադրել, թե՛ գրառողը, օրինաչափ համարելով անկապ քառյակների միմյանց հաջորդելը (մասնավորապես Արևելյան Հայաստանում), դրանց ևս ուշադրություն չի դարձրել: Այնուամենայնիվ, այդ երգերը այս առումով էլ, թեկուզ ևս համարժեցան, որոշակիորեն նվաստավոր բանահյուսական նյութ են պարունակում:

Չիբուցուց գրառված մտուշները ներկա հրատարակության մեջ զետեղված են «Արևմտահայ ժողովրդական երգեր» ընդհանուր խորագիրը կրող բաժնում, որտեղ առկա են Կոմիտասի՝ Կ.Պոլսում ապրած տարիներին մաս ուրիշներից գրառած արևմտահայ ժողովրդական երգեր: Մրանք ևս հետաքրքրական ու արժեքավոր են: Գրված են պատահական թերթիկների վրա կամ նյութի հետ կապ չունեցող տետրակիկներում, երբեմն թվագրված են, ինչպես՝ «Ձեյթունի երգ. Աշկեն, յո՞ր կորդաս. 1910, Կ.Պոլիս, Գալաթիս» կամ՝ «Եկեք տեսք ինչն է կերի գինչ. Մշո՛ ոճ, Ալեքսանդրիս, 1911, 19 մայիս նոր տոմարով»: Երբեմն էլ ժամանակը հասկացվում է կողմնակի տվյալներից, օրինակ, «Ծովին հավքըմ կեր» երգը (և մի ներկու ուրիշը) գրված է 1911 թվականի ապրիլ-մայիսին վերաբերող համերգային մի հայտագրի վրա: Վերջ հիշված՝ Կ.Պոլսում գրի առած «Եկեք, տեսք»-ի ներկու տարբերակ և «Սանդի երգը» (սա պետք չէ շփոթել Չիբուցուց գրառված նույնանուն երգի հետ) զետեղված են «Ժամրային» ժողովածուում:

Դրանց թվում կան դարձյալ վաճառ, ապա Շատախի, Մշո, Օլանքի, Երգնկայի, Ձեյթունի և այլ վայրերի շնչված, տարբեր ժանրերի պատկանող երգեր: Ներառյալ Ալեմա այն 11 երգերը, որ ներկա առաջին հրատարակությանը, մաս ծավալային նկատառումներով, դրել ենք ազգագրական ժողովածուի Ա հատորում, 1895թ. գրառված Ալեմա երգերին կից (ԵԺ 9):

Նկարագրված ժողովածուով չի սպառվում Կոմիտասի հավաքած արևմտահայ ժողովրդական երգերի քանակությունը, որպիսիք կան նրա այլ ժողովածուներից մեծ մասում նույնպես, տեղակայրի նշումով կամ առանց նշման, գրառված Էջմիածնում կամ այլուր, արևմտահայ այցելուից կամ գաղթականից:

Երկերի ժողովածուի մախրող հատորներում և այս հատորի առաջին ներկու բաժիններում Կոմիտասի հավաքած հայ գեղեցկական երգերի պահպանված կամ հայտնաբերված պաշարը հիմնականում սպառելով՝ հատորի շարունակության մեջ

զետեղել ենք հայտնաբերված կոմիտասյան մնուշները հայ ժողովրդական երաժշտության այն ճյուղերից, որոնք երաժշտագետի հավաքչական գործունեության մեջ համեմատաբար փոքր տեղ են գրավել: Դրանք են՝ հայ *քաղաքային-ժողովրդական ու աշուղական երգերը* և *գործիքային նվագները*:

Կոմիտասի վերաբերմունքը ժողատեղծագործության այն ճյուղի նկատմամբ, որն այսօր՝ երևույթներն ավելի լայնորեն ընդգրկելու և ավելի մամուլային համակարգելու պայմաններում, առանձնացվում է որպես *քաղաքային ժողովրդական երգարվեստ*, ինքնատիպ է եղել, մաս ժամանակի ընթացքում փոփոխվել է: Սի կողմից, գլխավորապես վաղ տարիներին, մա քաղաքային ժողովրդական երգերը հավաքել, դաշնակել է կամ դրանց առանձին հատվածներն օգտագործել իր ստեղծագործություններում: Մյուս կողմից, արդեն 1905 – 1906 թվականներին մա համարել է, որ հայ «քաղաքացիք ոչ մի *ժողովրդական երգ* չեն ստեղծել»³: Այս եզրակացության պատճառ է երաժշտագետի շարունակ խորացող ձգտումը՝ ազգային ավանդական երաժշտական ոճը երևան բերել ու ներկայացնել իր միասնական և ամենատիպական արտահայտությամբ, իսկ քաղաքում ստեղծված և կենցաղավարող երգերը թեև չի անտեսել, բայց դրանք դիտարկել է որպես ասորեսական *հեղինակային* գործեր:

Հայտնի է, որ հայ ժողովրդական երաժշտության քաղաքային ճյուղը, գյուղականի՝ բուն արմատականի համեմատությամբ բազմաբնույթ է, և երբեմն դժվար է լինում մեկ և մյուս երգերը ասեմանագատել միմյանցից: Մոսկ երաժշտական առումով քաղաքային-ժողովրդական երգերը երբեմն չեն էլ տարբերվում զեղջկականներից (հիշենք, որ Հայաստանի շատ քաղաքներում մարդկանց կենսակերպն էլ հաճախ գյուղականից շատ հեռու չի եղել):

Այսպիսի դեպքերում տարբերակողը մնացել է միայն երգի խոսքային մասը, երբ այն արհեստավարժ բանաստեղծի հորինվածք է՝ մույնիսկ գյուղական թեմա շոշափող, կամ պարունակում է բանաստեղծական կերպար, որն ընկած չէ գյուղացու կենսազգացողության ոլորտում: Այդպիսիների թվում են, օրինակ, Ակնա և Վանի մի շարք երգեր: Նման դեպքերում Կոմիտասի համար չափանիշ են եղել միայն երգի եղանակը և դրա ազգային առանձնահատկությունը (պատկանելությունը), ուստի դրանք մա պարզապես չի առանձնացրել զուտ գյուղականներից, և մեր խոսքն էլ այդպիսի երգերի մասին չէ, այլ այնպիսի երգերի, որոնք ծայրակարգային կերտվածքով մոմոռիկ չեն. դրանով իսկ խախտված է Կոմիտասի համար ամենաեականը. այս կամ այն չափով ենթարկված են այս կամ այն տեսակի ներդաշնակային մտածողության, որոնցում մա նկատվում են հոմոլոգն մտածողության ազդեցություններ: Կոմիտասի երաժշտական ազգագրական ժառանգությունն իր բոլոր հատվածներով ներկայացնելու ձգտումով այս երգերը մույնպես, որքան էլ դրանք բնորոշ չեն իր ընկալումներին, առանձին մնուշներով զետեղել ենք հատորում՝ Ակատի ունենալով, որ գործնականում Կոմիտասը օրոշակի տեղ է հատկացրել մա դրանց երգչախմբային մշակումներին:

Սրանց թվում են լեզվաբան Հր.Աճառյանից Կոմիտասի գրառած երգերը և դեռևս ուսանողական տարիներին, հավանաբար Գերմանիայում սովորող որևէ հայ ուսանողից գրառված առանց խոսքերի երկու եղանակ, որոնք որոշակիորեն արևմտահայ մնուշներ են, «Կարող բացվել է» երգը, որը խոսքերով արևելահայ, եղանակով արևմտահայկական է, ավելի ստույգ՝ «թափառական» է և որոշակի արևելահայկական 12 երգեր, որոնց մեծ մասի միաձայն գրառումները չեն պահպանվել, և մեղեդիները

³ Մեքենունը 1906թ. օգոստոսի 8/17-ին Բեռլինից Ա.Չոպանյանին գրած նամակից:

քաղել ենք մույն երգերի կոմիտասյան դաշնակումներից, երբ դրանք եական փոփոխությունների չեն ենթարկվել⁴:

Կոմիտասի դաշնակած կամ վերանշակած *ազգային-հայրենասիրական* այս երգերը, որ ի սկզբանե հայտնի մասնագետ երգահանների ստեղծագործություն լինելով՝ իրենց բնույթը պահպանել են, մի կողմ ենք թողել: Առանձին խնդիր է հարուցել նշանավոր «Լ.Ն. Լո»-ն կամ «Միփանա քաջեր»-ը: Այդ երգի ստեղծման մանրամասն պատմությունից, որը մեզ ավանդել է Մանուկ Աբեղյանը (տե՛ս ԵԺ 2), երևում է, որ դրա սկզբնական 8 տակտանոց հատիկը Արևմտյան Հայաստանից բերված ժողովրդական առանց խոսքի եղանակ է եղել, որը Կոմիտասի համար աղբյուր է ծառայել դրա հիման վրա ստեղծելու մի մոր ծավալում երաժշտական կոմպոզիցիա: Սկզբնական հատիկի հիման վրա գուցե դա մույնպես կարող էր ընդունվել որպես ժողովրդական ստեղծագործություն:

Բայց, ի վերջո, այդ գործը, որ Կոմիտասի շատ շնորհալի դրսևորված *ստեղծագործական աշխատանքի արդյունքով* է ամբողջացել, իր ողջ ժողովրդական բնույթով հանդերձ ակնհայտորեն կրում է մաս կոմպոզիտորական երկի հատկանիշներ: Այս պատճառով է, որ զերծ մնացինք քաղաքային (լինի արևմտյան թե արևելյան) ժողովրդական երգերի շարքում այդ գործը գետեղելուց: Մեր համոզմամբ Կոմիտասի հավաքած և ներկա հատորում զետեղված հայ քաղաքային ժողովրդական բոլոր երգերն իրենց երաժշտական-բանաստեղծական արժեքով հանդերձ մաս հետաքրքիր են որպես երաժշտաազգագրական միավորներ:

Փոքրածավալ հաջորդ քաժինն ընդգրկում է Կոմիտասի զրատած *երկու աշխարհիկ տաղը և հայ աշուղական ինը երգեր*:

Միջնադարյան տաղերի ժանրի նորովի հայտնաբերումը երաժիշտ-բանահավաք Կոմիտասի մեծագույն հաջողություններից է: Առավել ցցուն դա դրսևորվել է *հոգևոր* տաղերի բնագավառում, նրա զրատած այդպիսի մնուշները զետեղված են ներկա հրատարակության ութերորդ հատորում: Այստեղ զետեղվածը այդ մույն ժանրի *աշխարհիկ մնուշներից է*, որոնք, ցավոք, շատ ավելի փոքր քանակով են պահպանվել ու մեզ հասել: Այդ երկու մնուշները՝ «Առաօտ լուսաբեր» և «Ի մնջմաներ», մեկը խիստ սեղմ, մյուսն՝ ընդարձակ, մույնքան նշանավոր ստեղծագործություններ են:

Կոմիտաս և հայ աշուղական երաժշտություն համադրության մասին շատ է խոսվել ու գրվել: Հիրավի, աշուղական արվեստի հատուկ ուսումնասիրությանը Կոմիտասը չի զբաղվել, նա տարված է եղել հայ ժողովրդական երաժշտության հիմնական, իր համոզմամբ առավել բնորոշ ու կարևոր ճյուղի գիտական հայտնագործումով և ուսումնասիրությանը: Բայց նա երբեք չի թերագնահատել հայ աշուղների, թե՛ ամվամի վարպետների և թե՛ «անուսում» երգիչների արվեստը: Այլ հարց է, որ դրանք գնահատելիս մույնպես նա միշտ այնի առաջ է ունեցել մեղեդիական ոճի ազգային հարազատության (որոշակիության) չափանիշը:

Հայաստանում Կոմիտասի գործունեության տարիներին (մինչև 1910-ի գարունը) Մայաթ-Նովայի եղանակներն առանձնապես տարածված ու մատչելի չէին (այդ 1913-ին էր, որ Հ.Թումանյանի ջանքերով հանճարեղ աշուղի երգերի եղանակները «հավաքվեցին», «փ մի բերվեցին» և այդուհետ դարձան ավելի հայտնի ու մատչելի): Հնարավոր է, որ այս հանգամանքն իր հերթին և իր չափով պատճառ է դարձել այն խորություն, որ Կոմիտասի *պահպանված գրություններում* հայ աշուղների այդ վարպե-

⁴ Այս 18 երգերից երկուսը հատորի ներկա քաժնում զետեղված են՝ փոքր-ինչ պայմանական, դրանք են՝ «Ջուն ելիր, քալա» օրոշոցային երկու տարբերակները, որոնք քաղաքային կարող են համարվել գեթ այն պատճառով, որ հորիված են պրոֆեսիոնալ բանաստեղծության վրա, քայց հայ գյուղական երաժշտության արժատական ոճը ներկայացնող ելևէջներով:

տաց վարպետի մասին ոչինչ չենք գտնում: Մինչդեռ, նրա ուշադրությունից չեն վրիպել ո՛չ Շիրինը, ո՛չ էլ Ջիվանին ու Շերամը: Շիրինի արվեստն այն տարիներին Հայաստանում ավելի տարածված ու մատչելի էր, քան ներկայումս՝ մեր օրերում: Իսկ Ջիվանին ու Շերամը Կոմիտասի ժամանակակիցներն էին: 1903-ին Գարեգին Լևոնյանի միջոցով Կոմիտասը զերմ քարեկամացել էր Ջիվանու հետ, հետագայում Ալեքսանդրապոլում թե թիֆլիսում հաճախ հանդիպել էր նրան, ունկնդրել նրա կատարումը, գրուցել նրա հետ, գրի էր առել նրա երգերը: 1905-ին Էջմիածնում հանդիպել էր Շերամին, հենց այստեղ էր պարզվել, որ «Ալ ու արվան ես առել» երգը, որ տարիներ առաջ Կոմիտասը գրի էր առել, Շերամի երգի ժողովրդականացած տարբերակն է:

Եվ, այնուամենայնիվ, աշուղական արվեստի ու առանձին աշուղների նկատմամբ Կոմիտասի իրական վերաբերմունքը պատկերացնելու համար մինչև այժմ հայտնի նյութերը և տեղեկությունները, ցավոք սրտի, քավարար չեն: Այդ նկատի ունենալով՝ այստեղ մեզ ենք բերում աննկատ մնացած մի փաստ ևս: Պարզվում է, որ Կոմիտասը ոչ միայն սիրել ու գնահատել է հայ աշուղական արվեստը, այլև ինքն էլ վարպետորեն կատարելիս է եղել իր գնահատած երգերը:

Արևմտահայ լրագրերից մեկում Սերովբե քահանան (Պուրմայան), նկարագրելով Կոմիտասի երկու և կես ժամից ավելի տևած մի դասախոսությունը, որ մա համեմել էր հայ ժողովրդական երգերի իր կատարումներով, գրել է.

«Տ.Կոմիտաս աշուղներում վրա խոսելով ըսավ. «Անգրագետ և գրագետ երգիչներու կամուրջը կկազմեն աշուղները»: Հիշեց աշըղ Գիվանը և աշըղ Շիրինը, որոնք ժողովրդային քանաստեղծություններ կերգեին. անոնք երգած են, ավելացուց վարպետը, «այանդիստության սարսափը, ինչպես նաև ո՛չ ուրիշը անարգելու և ո՛չ ալ իր ազգն ուրանալու հորոթը»: Ի՛նչ վսեմ քարոյական:

Վարպետը հիշված աշուղներուն բերնով հայրենասիրական անա՛նկ հրաշալի քանաստեղծություններ հատիկ-հատիկ խոսելու պես երգեց, ու կարելի չէր չուզվի... Տ.Կոմիտաս վարդապետ իր աշուղական արտահայտություններովը կիշիցեն մեզի տերվիշ Համբարի, աշըղ Նեվզիրիի և աշըղ Ֆետայիի և ուրիշ հայ և թուրք աշուղների ոճը, որոնք չափված հանգերով երգած են տեսքաններ ու սենայիներ 4-5 ձայներու ելևէջներով: Սեր լսած տեսքանները միշտ թուրքերեն եղած են, այնինչ հիանալի երգեց Տ.Կոմիտաս վարդապետ հայ աշուղներու հայ լեզվով տեսքանները, զորս հատիկ-հատիկ արտահայտեց իբրև խոսք և իբրև երաժշտություն»:

Այս նկարագրությունը (եթե մի կողմ թողնենք այն սխալը, որ հեղինակը գործում է՝ հայկական և թուրքական աշուղական երգերի միջև միայն գրական լեզվի տարբերություն տեսնելով) Էսկան շատ քան է ավելացնում «Կոմիտաս է հայ աշուղական արվեստ» կապակցության խոր իմաստին: Եվ դարձյալ ցավալի է, որ Կոմիտասը ազգային քնորոշության իր չափանիշներով և իր քանաստեղծական-երաժշտական ընկալումով ու ճաշակով գրառված քիչ քան է թողել հայ աշուղներից, և այդ քիչն էլ իր փոքր մասով է մեզ հասել: Ըստ այնմ, առանձնապես թանկարժեք է նրա գրառած ամեն մի նմուշը:

Ներկա հրատարակության համար հայտնաբերված ու հավաքված նմուշները՝ Խ.Արովյանի «Վերջ Հայաստանի» նախաբանից «Վայ էն ազգին», Շիրինի «Այգեպան» և «Ալմարկյա», Ջիվանու «Այծյան», մեզ անհայտ հեղինակների «Ամնախ պատարագներ» և «Հայկազուն պատանիք» (այս վերջինը հայտնի է նաև ժողովրդական «Վայ գիտի, քյուքյուլա» խոսքերով) և առանց խոսքերի գրառված երկու աշուղական եղանակներ՝ գնահատելի են ոչ միայն Կոմիտաս երգահավաքի գործունեության ընդհանուր արժեքավորման տեսակետից: Դրանք մասամբ ամենայն մնացող երգեր են, մասամբ ներկայում լայնորեն հայտնի եղանակների գրեթե մի ամբողջ հարք առաջ հնչած և նրանցից զանազանվող հետաքրքրական տարբերակներ. դրանցում կան հայ

աշուղական երգարվեստի երկու գլխավոր ճյուղերի մնուչներ, երբ աշուղական բանաստեղծությունն ունի հատուկ դրա համար հորինված, «անհատականացված» եղանակ, և երբ այն երգվել է ավանդական տիպորինակ եղանակի «հարմարեցված» տարրերակով: Դրանով այդ եղանակները հայ աշուղական և հենց հայտնի աշուղների ստեղծագործությունն ուսումնասիրելու հետաքրքիր նյութ են տալիս: Առայժմ առեղծվածային է մնում Ջիվանու «Ախ, կորավ» անվանված երգի հարցը, որը Գ.Լ.Լոնյանի տվյալներով Շիրինի «Ալկմարկյա»-ի հետ միաժամանակ Կոմիտասը գրի է առել Ջիվանու կատարմից, և այն ևս հետագայում դարձել է «այրած մոտիվներից» մեկը:

Կարծես դրա փոխարեն մեզ է հասել նույն աշուղի «Քո փափագով» երգի գրառումը՝ փոքր-ինչ վերաձևակված. Կոմիտասն այդ երգի եղանակից «ձուլել» է իր «Անուշ» օպերայի հերոսուհու գլխավոր երգերից մեկի՝ «Ախ, էն կանաչ սարի լամջին» երգի հայկական մեղեդին: Ստորև այդ երգը և Ջիվանու ռուսաձևորդից հատված.

Ախ, էն կա - մալ սա - ռի լամ - ջին, ո՛վ է քո - նա՞ծ

էն սը - դեն, վը - ղեն քա - շած սև, յա - վոց - ջին, կու - ող հա - նա՞ծ

էն սը - դեն: Ձա՛ն ի՞նչ յարն է, քա - մո՞ն մա - մո՞ն,

ծաղ - կի ի՞նչ տո՛ւտվ, մա հար - թել, սա - ռի լամ - ջին,

ի՞նչ փի փի - ջին մուշ - մուշ ա - նուշ, մը - րա՛վել:

*Քո փափագով վատվում եմ, արի, սիրական, ուր տեղ ես,
Երկնային ամպերու մեջ մտտող ծիածան, ուր տեղ ես.
Ծամապարիզը մայելով այքերումըս լույս չմնաց,
Եկ, երևույթ տեսանեմ, ազնիվ սիրական, ուր տեղ ես:*

*Ինչ պատահավ, անուշիկ, որ դու հեռացար ի՞նձանից,
Քաղցրախոս անուշ լեզու, անվամբ գովական, ուր տեղ ես.
Քանի մեկ, քանի չարաչար տամբըլվին այլոց ձեռքով,
Ով վեհապան՞ծ անվանի, կյանքիս պահապան, ուր տեղ ես...*

Ինչպես տեսնում ենք, Թումանյանի բանաստեղծության համար ժողովրդական աղբյուրից եղանակ փնտրելիս Կոմիտասը թե՛ բանաստեղծական, թե՛ երաժշտական առումով իղեպական ընտրություն է արել, և խնդիրը վճռվել է աշուղական մեղեդու միջոցով:

Հիշատակենք, որ բացի հատուկ գրի առնված աշուղական երգերից, Կոմիտասի գյուղական երգերի զամազան ժողովածուներում գետեղված աշուղական մնուչներ են մահ Շերամի արդեն հիշատակված «Ալ ու ավան»-ը, արքսանդրապոլցի աշուղ Ֆիզահիի «Վարդ կռչիկ», առայժմ մեզ անհայտ մնացող հեղինակների «Սուտ

ազգականներ» և «Լսեցեք, պարոններ» և այլն: Արևմտահայ աշուղ Սայիլ օղլիի մի երգ՝ «Պեզրկյանն իջեր է խամը» զետեղված է «Ալմա շարուն» (Եժ 9):

Կոմիտասից պահպանված և առաջին անգամ հրատարակվող աշուղական մնուշներից առանձին հետաքրքրականություն ունի նրա գրառած «Քյորօղլի» վիպասանությունից թուրքերեն խոսքերով երգված երգը: Ինչպես հայասնի է, ժողովրդական վրիժառու, միաժամանակ և աշուղ Քյորօղլու մասին վիպասանությունը նշանակալից տեղ է գրավում Մերձավոր Արևելքի և Միջին Ասիայի շատ ժողովուրդների, դրանց թվում մաս հայերի, վրացիների ու քրդերի ավանդական աշուղական ժառանգության մեջ: Այս դեպքում «Փափառական» է վիպասանության բուն նյութը (թեև այն ևս տարրեր ժողովուրդների մոտ տարբերակված է), իսկ եղանակները, թեև դրանցում կան ինչ-ինչ «տիպարային» տարրեր (օրինակ, ընդհանուր ռիթմական կերտվածքները), այնուամենայնիվ ամեն մի ժողովրդի մոտ համընդ է են եկել այդ ժողովրդի ազգային աշուղական երաժշտության բնորոշ հատկանիշներով, ըստ այնմ՝ տարրեր չափի և տարրեր տեսակների մեղեդիականությամբ⁵:


Կոմիտասի գրառումը հայկական «Քյորօղլու» գլխավոր երգի տարբերակներից է, լայնորեն հայտնի այն երգի, որը Արևելյան Հայաստանում մոտ ժամանակներն է հասցվել գրող Ղազարոս Աղայանի միջոցով և սկսվում է «Այ Քյորօղլի, քան Քյորօղլի» տողով, բազմիցս մշակված է տարրեր կատարումների համար և «եզրափակող ակորդ» է դարձել նշանավոր «Պեպոլ» ֆիլմի համար: Թեև խմամուկական կապն այստեղ շատ անմիջական չէ, բայց այդ երգի՝ Կոմիտասի գրառումը ևս առանձնանում է հարուստ բովանդակությամբ և վիպասանությունից հավաքված երգերի թվում պատշաճ տեղ կզբաղի⁶:

Հատորում առաջին անգամ հրատարակվող հայկական ֆոլկլորային նյութերի մեջ կան մաս Կոմիտասի գրառած ժողովրդական նվագեղանակներ:

Երաժշտագետի տեսական աշխատություններում հայ ժողովրդական նվագադրանային երաժշտությունը ներկայանում է որպես մի պատկանելի ու բազմաշերտ մշակույթ՝ ոճական բազմազան ճյուղավորումներով, որոնք սերտորեն կապված են գյուղական ու քաղաքային ժողովրդի կյանքին և կենցաղում նշանակալից տեղ են բռնում: Հայտնի են Կոմիտասի առանձին հավավածությունն ու համակրանքը մասնավորապես *բուլ* (փող, սրինգ) նվագարանի և դրանով կատարվող երաժշտության հնկատմամբ, հիշենք այդ նվագարանի տեխնիկական ու արտահայտչական նկարավորությունների՝ նրա ձեռնարկած խոր մասնագիտական ուսումնասիրությունը («Հայ ժողովրդական երաժշտություն», Փ., 1938) և ժողոված ու պատվիրած քաղնատեսակ սրինգների հավաքածուն: Նույնքան ակնհայտ է նրա հետաքրքրվածությունը ժողովրդական նվագարաններով կատարվող *պարեղանակների* նկատմամբ. այդպիսի եղանակների նրա քաղաքավեստ դաշնամուրային մշակումները պարզ ցուցադրում են, թե արվեստագետը որպիսի՝ խորությամբ էր ըմկալում դրանք՝ այդ «ազգային պարեղանակների» ոճն ու ոգին:

⁵ Այսպես, օրինակ, այն դեպքում, երբ աղբյուրական-թուրքական աշուղների մոտ «Քյորօղլու» երգերի համար ավանդականորեն ընդունված է երկու-երեք կից աստիճաններով կազմավորվող ռիթմավորված *ասերցց* (տեն, օրինակ, Է.Էրաբովայի «Աղբյուրների աշուղների արվեստը» ռուսերեն աշխատությունը, էջ 62-64, Բ., 1984), հայկական «Քյորօղլու» եղանակները ընդգրկել են լայն ենյուրմածավալ և կատարվել ճոխ զարգացած մեղեդիականությամբ՝ որպես ավարտում երգեր:

⁶ Այդ եղանակի մի այլ, փոքր-ինչ սքեմավորված տարբերակ Աղբյուրանում 1938-ին գրառված է հայազգի աշուղ Ավագ Ազարյանի դարձյալ թուրքերեն կատարումից և քերված է վերը հիշատակված աշխատության մեջ (էջ 65):



Այնուամենայնիվ դժվար է պնդել, որ Կոմիտասը հայ ժողովրդական մկազարանային եղանակները հավանելուց մույնքան ժամանակ ու եռանդ է հատկացրել, որքան զեղջկական երգերի հավաքմանը: Բայց հակառակը պնդել նույնպես դժվար է, զանազան փաստեր վկայում են, որ ճրագրասած մկազարանային եղանակներից նույնպես մի շարք մնույցներ չեն պահպանվել, հասնեանյան դեպք մկազարանային եղանակների գրառումների որևէ ամբողջական հավաքածու Կոմիտասի հայտնաբերված բնագրերում չկա: Սույն հատորում ներկայացվող մկազարանային նյութը հայտնաբերել ենք զանազան ձեռագրերում՝ երբեմն «պատահականորեն» զետեղված «բաշտային» գրառումներով կամ ուրվագրերով, պարերի ուսումնասիրության սևագրերում, ինչպես և դեռևս ճանարանական Սողոմոն սարկավազի ձեռագրից ժամանակին կատարված արտագրություններում: Այդ նյութերի համակարգումը վկայում է, որ հայ ժողովրդական մկազարանային երաժշտությունը Կոմիտասին զբաղվել է իր ժամրային տարրեր տեսակներով:

Ըստ այսմ՝ հատորում կան կենտասպարերի և խմբասպարերի մկազեղանակներ, որոնցում մեղեդիական-ճոճական առուժով մկատելի է երկու տեսակ՝ ավելի քաղաքային կենցաղին բնորոշ, երբեմն փոքր-ինչ լայն շրջանակներից սերված, մասնավորապես «սազամեղաքական» շեշտերով եղանակներ՝ առանց անվանումների (թ. 120-130) և ավելի ցայտուն ազգային-մեղեդիական ոճի, արևելահայ ու արևմտահայ եղանակներ՝ ռոտչակի անվանումներով (թ. 131-142): Մեր այս քաժամումն ինչ-որ չափով պայմանական է, որովհետև առաջին խմբի եղանակներում, մասնավորապես դրանց մեջ կան և ազգային-մեղեդիական ոճի տարրեր: Չնայած դրան, երևում է, որ երկրորդ խմբի եղանակները Կոմիտասին հետաքրքրել են բուն պարերի դիմքի և շարժման ուսումնասիրման նպատակով, ուստի մաքավականացել է՝ ամեն մի պարից նշեղով միայն հիմնական թեմային հատիկը՝ առանց հետագա համապատասխանի բնույթի տարրերակային շարունակությունների, ինչպիսիք մնան եղանակներն ունեմում են սովորաբար:

Ժողովրդի մեջ շրջագայելու ընթացքում Կոմիտասին հանդիպել է մասնականաբանային երաժշտության լայնորեն սիրված այն տեսակը, որ կարելի է բնութագրել շարանվազ՝ սյուիտ անվանումով: Այդպիսի երկու շարերից մեկն իր ձեռքով վերնագրված է «Ջուռմայի մկազ» (թ. 148-153): Մրա հատվածներից մեկը՝ «Արզումի ոճով», Կոմիտասի նշանավոր «Ետ ու առաջ» պարի ժողովրդական սկզբնադրույթն է: Մյուս շարանվազը (թ. 143-147) նախորդի մասնությամբ մեծը պայմանականորեն վերնագրել ենք «Սրնգի մկազ»: Սկզբնական համեմատաբար ընդարձակ հատվածը ժողովրդական մկազարանային այն ստեղծագործություններից է, որոնք Կոմիտասն իր ուսումնասիրության մեջ անվանել է «երևակայություններ»: Մյուս հատվածները կարճառոտ են շարադրված, կարծես այս դեպքում նույնպես զրատող «կատարողին է թողել» դրանց հանպատրաստից տարրերակային զարգացումը: Ժողովրդական մնան շարանվազներից է սերվել կոմպոզիտորի նշանավոր «Մշո Շորթր»-ն իր գաղափարով ու ձևով: Հատորում դրված են մասն Կոմիտասի այդ ստեղծագործության և դաշնամուրային պարերից մեկի սկզբնական ուրվագրումները (թ. 154-158):

Կոմիտասից մեզ հասած մկազարանային գրառումներից են մասն գյուղական ավանդական հարսամիջի և «Սուրբ Կարապետ» պատումի մի քանի մկազային հասվածներ, որ զետեղված էին ԵԺ 10-ում: Ներկա հատորին հավելված են մասն 22 պար-եղանակներ, որոնք երաժշտագետի հանձնարարությամբ գրի են առնված մրա աշակերտների կողմից⁷: (Երբեմն դրանք նույնիսկ կրում են Կոմիտասի խմբագրական շտկումները):

⁷ Դրանց ընտրությունն ու գրառումը, անշուշտ, կատարվել են կոմիտասյան սկզբունքներով ու եղանակներով:

Կոմիտասից պահպանված ժողովրդական-նվագարանային գրառումները քննչատ մեծարանակ ու հարուստ չեն, քայց երաժշտագագարական մկատելի հետաքրքրականություն ունեն թնկուզն այն պատճառով, որ իրականացված են 100-110 տարի առաջ, իսկ նվագարանային եղանակները (մասնավորապես պարեղանակները) հայտնի է, որ ժամանակի ընթացքում արագորեն փոփոխվում, շարունակ ճորովում են⁸. ուրեմն դրանք տալիս են հայ ժողովրդական արվեստի այդ քնագավառի՝ մեզանց մի ամբողջ դար առաջ ունեցած պատկերը:

Այլագի երգերը

Հայտնի է, որ Կոմիտասը ոչ միայն հայ ժողովրդական երաժշտության, այլև քրդական, թուրքական, պարսկական և արաբական երգերի գիտակ էր: Իր դեռևս առաջին դասախոսություններում (Բեռլինում, 1899-իմ), ինչպես և հետագայում (օրինակ, Միջազգային երաժշտական ընկերության Փարիզի համաժողովում, 1914-իմ)⁹ հայկական երաժշտության տարրերիչ հատկանիշները ցուցադրելիս, համեմատության համար մի շարք օրինակներ էր բերել այդ ժողովուրդների երգերից, երգելով ցուցադրել էր դրանց կատարման ազգային կերպերը:

Եթե պարսկական և արաբական երաժշտության քնագավառում նրա գիտակությունը հիմնվում էր գլխավորապես լսողական ընկալումների վրա, ապա քրդական ու թուրքական երաժշտության քնագավառում նա առիթը քայ չէր թողնում նաև գրառել երգերը:

Որքան է գրառած եղել՝ դժվար է ասել: Մանրամասնորեն տեղյակ լինելով Կոմիտասի հավաքական ողջ գործունեությանը՝ կարող ենք միայն հաստատել, որ հայկականների մեծան պահպանվել կամ մեզ է հասել այդ երգերի մի մասը միայն: Արաբական և պարսկական ժողովրդական երգեր դիվանում ընդհանրապես չկան: Ժամանակային հաջորդականությամբ նկարագրենք նախ թուրքերեն երգերը:

Կոմիտասի գրառած, պահպանված թուրքերեն երգերի էական քաժինը ներկայացնում է թ. 352 տետրակը. դրանք այն երգերն են, որ մա գրի է առել իր հայրենի քաղաքում, ուր մեկնել էր իր տկարացած առողջությունը վերականգնելու: Ինքնակենսագրության մեջ Կոմիտասը նկատել է՝ «Հորս ու մորս ազգատունը ի քնն ծայրնեղ է: Հայրս և հորեղբայրս՝ Հարություն Սողոմոնյանը, հայտնի դպիր են եղել մեր քաղաքի ս.Թեոդորոս եկեղեցում: Մորս ու հորս՝ տաճիկ լեզվով ու նղանակներով հորինած երգերը, որոնցից մի քանիսն արդեն գրել են 1893 թվականին հայրենիքումս, դեռ երգում են մեծ հիացմունքով մեր քաղաքի ծերերը»:

Հիշատակված ժամանակից մեկնկես տասնամյակ հետո գրված այս տեղեկություններում 1893-ը պարզ սխալումն է⁹: Բուն այդ ժողովածուն Կոմիտասի ծառայվելով ներմագրված է՝ «Արևելյան թրքական եղանակներ, հավաքեց Սողոմոն ալ. սարկավազ Սողոմոնյան, միարքան Մայր Աթոռ Ս. Էջմիածնի, 1892, 15/ԺԱ (նոյեմբեր)»: Իսկ Կոմիտասի «Արևելյան թրքական եղանակներ» և «Հորս ու մորս տաճիկ լեզվով ու

⁸ Հայ ժողովրդական պարեղանակների հաճախ տարբերակ և անհասկանալի անվանումների մասին մեքն ասել ենք ԵՎ VI-ի ծանոթագրություններում (Էջ 210): Այս հատրում երբեմն համեղիպում ենք պարի տեսակը կամ կոմկրետ պարածը ճշող հաջող անվանումների:

⁹ Ելզրիտ չն մաև Ս.Մելիքյանի քերած 1890 և Կ.Պոլիս տեղակայրը («Ազգագրական ժողովածու», էջ VIII, 193 թ.):

եղանակներով հորինած երգեր» արտահայտությունները անհրաժեշտ է փոքր-ինչ քացատրել:

Թ. 352 ժողովածուում ներկայացված են թուրքական քաղաքային կենցաղային երգի երկու գլխավոր տեսակներ՝ *շարբի* (կամ՝ *շարբը*, ինչպես գրել է Կոմիտասը թուրքական արտահանության համաձայն) և *թյուրբի* (*թյուրբու*): Շարբիները ընդհանրապես վարպետ մեղեդիահան-երգահանների հեղինակություններ են՝ շատ դիպքերում հեղինակներն իսկ հայտնի: Սրանք համեմատաբար ճոխ երգեր են, ոճով մոտ տաճկաարաբական վոկալգործիքային մականմերիին: Իսկ թյուրբիները ոչ մասնագետ հեղինակների պարզ ստեղծագործություններ են կամ պարզապես ամհեղինակ, քաղաքային ժողովրդական կամ ժողովրդականացած երգեր, իրենց տեսակով քիչ թե շատ մոտ պարսկական թեսնիֆներին:

Կոմիտասի՝ *Քյոթաեհիայում* հավաքած թյուրբիներում երաժշտական կառույցը մեծ մասամբ երաժշտական պարզ կամ լրացված պարբերություն է՝ երբեմն պարային-պարբերական, երբեմն էլ համեմատաբար ազատ շիջմով: Շարբիներում թեև մուլմպես կամ պարզագույն կառուցվածքներ, քայց դրանց ավելի բնորոշ են դասական երկմաս երգային ձևերը և մասնավոր դրև պարբերականություն չցուցաբերող ազատ կառուցվածքները, գերազանցապես հենց ոչ պարբերական շիջմերով: Երկու դեպքում էլ լայնորեն նրևան են գալիս զարդենյուններ (մասնավորապես *մախլազներ*)¹⁰, յուրահատուկ է մաս եղանակի երկրորդ կեսում դրա անսպասելի անցումը քարձր ոլորտի (մեծ մասամբ դեպի ձայնակարգի 7-րդ – 8-րդ աստիճանը), ինչը հետո առաջ է բերում սկզբնական պարբերության տարբերակված կրկնություն, աստիճանաբար էջը դեպի իյմնաձայնը: Երկու դեպքում էլ գործածական են խառը մետրեր:

Ընդհանուր առմամբ այս եղանակների երաժշտական կազմությունը բավական հարուստ է ու բազմազան: Մեր ասածը վերաբերում է դրանց և՛ ելևէջային կազմին, և՛ բուն ձայնակարգային ինքնին: Թվում է, թե նրիտասարդ երաժիշտ մեծարանականը երգերը հավաքելիս ունեցել է մաս մասնավոր նպատակ՝ հավաքել ինչքան կարելի է տարբեր ձայնակարգերի նմուշներ և թուրքական քաղաքային երաժշտության մեջ գործածական մականների համակարգը ներկայացնել հնարավորինս ընդարձակ:

Հիրավի, թ. 352 ժողովածուում կարելի է դիտել որպես ձայնակարգերի և եղանակի ծավալման ընթացքում բնորոշ ելևէջներով դրանց քացահայտման կերպերի մի յուրատեսակ «քրեստոմատիա»։ զբաղված 69 երգերի եղանակները (երգերից մեկը երկու տարբեր եղանակով է գրված) ընդգրկում են Կոմիտասի ձեռքով նշված 12 մականներ՝ Ուշշաք, Հյուսեյնի, Հինգզ, Շահնազ, Սապահի, Պետենիքյար, Ռաստ, Հյուզգամ, Մյուզինաք, Նեհավենդ, Սեզյա, Էվին, ապա և՛ տարբեր մականների մույնքան զուգորդումներ՝ Ուշշաք-Հինգզ, Հինգզ-Շահնազ, Հյուզգամ-Սեզյա, Նեհավենդ-Սապահի և այլ երկտարր ու եռատարր զուգորդումներ, որոնց թվում կան մաս Աշրան, Արաք, Բուսելիք, Հիսար և այլ մականներ: Արդեն դրանով Կոմիտասի ժողովածուում թուրքական երաժշտության ուսումնասիրության համար մի արժեքավոր աղբյուր է:

Սակայն ժողովածուում ունի և մի առանձնահատկություն. Կոմիտասի համար երգած 22 անձնավորություններից 20-ը հայեր են¹¹:

¹⁰ Թեև թուրքական բուն ժողովրդական (գյուղական) երգերում, գոյություն ունեցող հրապարակումներից դատելով, մեղիզմերն անհամեմատ ավելի են:

¹¹ Նրանց թվում են, ի դեպ՝ մրա ազգականները. հորեղբայրը՝ Հարություն աղա Մողոմոնյան, հորակալը՝ տիկ. Գոյունեն Մողոմոնյան, տիկնայք Ջմրուխտ և Ջարուհի Մողոմոնյանները. մեր հավաքած տեղիկությունների համաձայն՝ Կոմիտասի մոտ ազգականներից է առմված մաս Հարություն Հինգեղի Հեղինայանը, որ երգել է երգերից 12-ը, և որին Կոմիտասը միլիոն է նույն 1892-ին, նույնպես հայրենի քաղաքում իրականացրած իր «Մասն քառաձայն երգեցողությանց սրբուր Պատարագի» աշխատությունը (այստեղ Կոմիտասը Հարությունին անվանում է «եղբայր», տե՛ս

Ենչու է, Թուրքիայում առկա սոցիալ-քաղաքական պայմաններում Զյոքս-հիյախի, ինչպես և երկրի շատ այլ վայրերի հայերի համար, հարկադրաբար, թուրքերենն էր դարձել խոսակցական լեզու, և նրանց կենցաղում որոշակի տեղ էին գրավում մաս թուրքական եղանակները¹²։ Եվ, այնուամենայնիվ, Կոմիտասի համար երգած մարդկանց ազգային պատկանելությունը չէր կարող բոլորովին չամոքարախոսմալ այդ երգերի, գոնե դրանց մի մասի (մայած ինչ երգ) մեղեդիական բովանդակության վրա։ Եթե ավելացնենք և այն, որ այս ժողովածուն ներկայացնում է *քաղաքի*՝ թեև հիմնականում բրդախոս, բայց *հայաբնակ արհեստավորական քաղաքի* երաժշտական կենցաղը, պարզ կլինի, որ այդ բոլորի հետևանքով ժողովածուի մի շարք երգեր թուրքական մեղեդիական ոճի առումով փոքր-ինչ «սնհարթ» կան երբեմն «չեզոք» կարող են երևալ։ Այդպիսի երգերի ելեջային կառույցում, թուրքական տարրի ակնհայտ գերակշռությանը համընթաց, իրոք առկա են մաս հայկական (աշուղական, քաղաքային-ժողովրդական, երբեմն՝ մույնիսկ գյուղական), անշուշտ, մաս նվրտական մեղեդիական ոճի տարրեր։ Երգերից մեկը (թ. 45) տիպիկ հայ աշուղական ելեջներով, մյուսը (թ. 23) հայ գեղջկական երգերի ելեջներով է հոսում¹³։

Մի շարք այլ եղանակներում, մասնավորապես սկզբնային և ավարտող դարձվածքներում մույնպես կան բնորոշ հայկական ելեջներ։ Մի այլ երգ (թ. 19) այն «թափառական» եղանակներին է, որ երգվել և այժմ էլ երգվում է ոչ միայն թուրքերեն, այլև մի ամբողջ շարք ուրիշ ժողովուրդների լեզուներով, դրանք թվում՝ մաս հայերեն (խոսքը Ռ. Պատկանյանի «Վարդը բացվել է քաղաքին» խոսքերով երգի մասին է, որի բազմաձայնած շարադրությունը Կոմիտասն ինքը երիտասարդական տարիներին երգչախմբով կատարել է (տե՛ս ԵԺ IV)։ Մի ուրիշ երգում (թ. 60) Պաղտասար Գալիբի «Ժմնջվածնեղ արքայական» տաղի եղանակն է՝ զուգորդված Ռուսինյանի «Կլիկիկա»-ի («Երբ որ բացվին դռներն հոստ») խոսքերի թուրքերեն ազատ բարգամաժայան հետ։ Մի այլ եղանակ, որ «օրհնետալ» բնույթ ունի (թ. 33), իր հիմքով ավելի հայկական է, քան թուրքական (ի դեպ՝ սրա մակամը մշված չէ) և մույնպես իր ուսանողական տարիներին (Գեորգիանյանում) Կոմիտասը մշակել է այս դիպրոմ դաշնամուրի համար։ Եղանակներից մեկը (թ. 11) գրեթե մույնուրյանը կա Տ.Չուխանյանի «Լեբերիջի» օպերետում, երկուսը (թ. 37 և 48) Կոմիտասը, դարձյալ Բեռլինում, մտադրված է եղել օգտագործել իր ծրագրած «Վարդան» օպերայում¹⁴։

Վերն ակնարկված 23 (244) երգը (սկսվում է «Այս, սու եօլս» խոսքերով) գրի առնելուց տաս տարի հետո Կոմիտասն օգտագործել է իր «Քաղաքավարության վնասներ» երաժշտական պատկերներից երկրորդում որպես օրինակ այն բանի, թե ինչպես քաղքենի պոպահայերը գլուխները տաքացած պահին սիրել են երգել թուրքերեն, բայց հայաշունչ երգեր։ Ավելորդ է հիշեցնել, որ «հին օրերին» կազմված ժողովածուներն էլ առանց գործածվելու չեն մնացել։

Վերջապես, մի քանի երգերում տեղ գտած կրկնակային «ոռա, լա, լա» վանկապիտոնը քաղաքային երաժշտական կենցաղի երևույթ է՝ նվրտականից եկող։

ԵԺ VIII)։ Գրառված եղանակներից երևում է, որ նրանք բոլորն էլ երաժշտականորեն օժտված են եղել։ Ցավոք, գրառումներում նրանց մասին այլ տեղեկություններ չկան։

¹² Առնձը և այն, որ թուրքական լեզվին ու երաժշտությանը տեղյակ հայերը երբեմն այդ երգերը կատարում էին եթե թուրք մասնագետ երգիչներից ոչ լավ, բայց և ոչ պակաս վարպետությամբ։

¹³ Այս երգի նկատմամբ Կոմիտասի առանձնահատուկ վերաբերմունքի մասին տե՛ս 244 ժամոթությունը։

¹⁴ Թ. 37-ի մոտ մակագրել է՝ «Իբրև աղոթք օպերայի համար, A dur, ծանր չափով, 3/4 - ով», p. 48-ի մասին գրված է՝ «Ենտի՛ն կիթոն»՝ Վարդանն յուր քանակով ամցնում է դեպի կուլի դաշտը... նվագել տալ Fis dur»։

Այս թուրքերեն երգերի գրառումը բնականաբար հայկական ձայնամիջերով է: Դրանցում երբեմն կան անհավասարաչափ տեմպերացիայի առանձին նշումներ: Բայց սրանք չեն վերաբերում ո՛չ կատարողների երգեցողության մեջ տեղի ունեցող տոնային շեղումներին, ո՛չ էլ բուն մականներին իրենց դիատոն վիճակում, այլ ամոլորդարձմունք են ստեղծում հայկական ձայնակարգի տեմպերացիայից բխող այն առանձնահատկությունը, երբ անհրաժեշտություն է առաջանում շարքում հեմակետ հանդիսացող կամ դարձող հնչյունի ստորին տոնը կիսախրոմատիկ բարձրացնել, օրինակ, վերնախաղի բարձրացումը, երբ բեմկորդը հեմակետ է դառնում, կամ մերքնախաղի բարձրացումը, երբ պարույկն է հեմակետ դառնում:

Ստացվում է, որ «թուրքական եղանակներ» հասկացությունն այստեղ բավական «զայնեցված» է ընկալված: Մինչդեռ «հայկական», «հայ ժողովրդական» և այլ մեմանտիկ արտահայտությունները Կոմիտասը, զոնե հետագա տարիներին, ընկալում էր չափազանց սեղմ ու որոշակի սահմաններում՝ միայն ի դեմս հայ գեղջկական երգ ու մվազի: Ուստի, իր ներկա ժողովածուի համար երիտասարդ Կոմիտասի նշանակած վերնագիրն էլ թերևս պետք է հասկանալ «Արևելյան եղանակներով թուրքերեն երգեր» իմաստով:

Այնուամենայնիվ, վերոհիշյալ հանգամանքները Կոմիտասի այս՝ որպես բուն թուրքական երգերի ժողովածուի արժեքը չեն նսեմացնում, քանի որ դրանցում կան, և ոչ քիչ, տիպիկ թուրքական քաղաքային եղանակներ և երգեր: Ե՛հիշտ հակառակը՝ այդ հանգամանքները մույն ժողովածուին մի լրացուցիչ արժեք են տալիս որպես Թուրքիայի հայաբնակ գավառական քաղաքի երաժշտական կենցաղի մեջ տեղի ունեցած փոխադարձ թափանցումների ուսումնասիրման աղբյուր:

Կոմիտասի գրառած թուրքերեն երգերի այս ժողովածուի ամբողջական գիտական հրատարակությունը քազմակողմամիտորեն քաղող խնդիր է, որ թողնվում է ապագային: Ներկա հատորում գտնելված են այդ երգերից 13 նմուշ, որոնք ամբողջ ժողովածուի մասին ևս կարող են տալ բավականաչափ հստակ պատկերացում. դրանք են՝ թ. 1, 4, 11, 16, 23, 27, 33, 38, 41, 45, 53, 58 և 60: Ի դեպ, սրանք թվում են այն երեք երգերը, որ 1899թ. հունիսի 14-ին Բեռլինում կարդացած իր դասախոսության մեջ Կոմիտասը ներկայացրել է որպես թուրքական երգեր՝ հայկականների հետ համեմատելու նպատակով. սրանք են՝ թ. 16, 33, 38:

Կոմիտասի գրառած երկու թուրքալեզու, քայց քացառապես հայ երգարվեստը մերկայացնող երգերը («Բինգյուլ» և «Զյորոլլի») բնականաբար զետեղված են մերկա հրատարակության հայկական (երկրորդը՝ աշուղական) երգերի մեջ: Դիվանում հայտնաբերեցինք երկու այլ, բմորոշ թուրքական երգեր, որ զետեղված են մերկա հատորում: Այստեղ է զետեղված նաև իր տեսակով ու բովանդակությամբ մի քացառիկ մնուշ՝ Կոմիտասի գրառած *Ազանը*: Որպես ժողովրդական-ծիսային եղանակ՝ իր ավանդական մեղեդիական կերտվածքով (մեղեդիացված կամ յուբիլիացիաօգտագործող ասերգ) և ձայնակարգային-ելեշային բովանդակությամբ (խիտ ոգիատունիկ բնույթով, պարզ դրսևորված օժանդակ հեմակետով ու վերջում անսպասելի մոդուլացումով) այդ Ազանը անշուշտ գիտաազգագրական մեծ հետաքրքրականություն ունի:

դայ մամ դի - նէ, եա - ման,
dai mam di - ne, ia - man,

դի - նէ, եա - ման,
di - ne, ia - man.

Բարայի Արարեան

190. ԼԷ, ԼԷ, ԳԱՎՐԷ

Ծանր, ազատ շափոմ

ԼԷ, ԼԷ, գավ-րէ, մը շոր գավ-րյա մը քո - ու-նա,
 ԼԷ, ԼԷ, գավ-րէ, գավր ու սսփ-ա խաչք ե - թը-նա,
 վայ ԼԷ, ԼԷ, ԼԷ, վայ ԼԷ, ԼԷ, ԼԷ, վայ ԼԷ, ԼԷ, ԼԷ,
 քա՛ - ֆոր գավ-րէ, վայ ԼԷ, ԼԷ, ԼԷ,
 վայ ԼԷ, ԼԷ, ԼԷ, վայ ԼԷ, ԼԷ, ԼԷ, քա՛ - ֆոր գավ-րէ.

191.

Կամ
 թե հո՛:
 Ընթացրի՛

192. ՀԱՐ ՎԱՆԷ

Հար վա - նէ, վա - նէ, հար վա - նէ,
կու - լի - կա վա - նէ, մեյ - դա - նէ,
Մա - լա ղը խա - նէ կար խա - նէ,
Ավ - ժի արու խաթ - րն ի - մա - նէ,
Հար վա - նէ, վա - նէ, հար վա - նէ:

Հօմա սարն Սիփանա,
Մըն կիալա կուլիկա դինա
Ռավէդ կօմա սեփինա,
Ռաշտը կիալկա կիազինա
Եա խօրտան յու խկըտինա,
Հար վանէ..

Հար կորվան Արդիշ,
Դանի քրնիա Գեաիշ,
Աջօ ֆաթօ հալանդ
Կըրմա տարա դարկուշը:
Հար վանէ:

Գեորգա Աստվածատուրյան

193. ՈՒ ԼԷ ՅԱՄՆՆ

Ու Լե յա-ման, ու Լե յա - ման, ու Լե յա-ման,
Լո ափ - րի - վա - նո, Լո ափ րին սաա - նո
Լո շո - վա-նո: Պե-րի-վա-նան հոլ-քե - շա - նե Լո
ազը - տը տո շե, մը-կով - ա-լիք-ը ափ Լո-իկ պը -
րո - շե, Լո, Լո, վոյ Լո, մը-կով - ա Լիք - ը
ափ Լո Լիկ պը-րո - շե սա - մի - սա-նան սա լա,

վի սա - լան լո ա - շու - պո շե,
 լո, լո, վոյ լո, լո, շո - վա - նո, քայ, հու:

194. ԶՆՆԻ ԹԵՆԱ ՄԵՅԴԱՆԵ

ջըն - դի բե - նա մեյ - դա - նե,
 դա - ու դե - հա գա - յա - թե,
 ջըն - դի յա - նո, ջըն - դի յան,
 ջըն - դի բե - նա մեյ - դա - նե:

195. ՆԸՄԿԸ ԽԸՐԹԱՆԵ

Նըմ - կը խըր-թա - նե, խըր-թա-նե, ջըմ - կը մալ-դա հո - դա:

196. ՄԻՐԱՆՈՒ

Մի - րա - նա, մի - րա - նա,
ալ - կա - տա թի - րա - նա,
մի - րե մըն միտ ալ - կա - տա թի - րա - նա:

197.

Musical score consisting of eight staves of music. The notation includes various rhythmic values, accidentals, and dynamic markings.

198. ՄՐՆԳԻ ՄԵՂԵԴԻ

[Մանր, ազատ չափով. Lento, tempo rubato]

Musical score for '198. ՄՐՆԳԻ ՄԵՂԵԴԻ'. The notation includes various rhythmic values, accidentals, and dynamic markings.

199. ՄՐՆԳԻ ՄԵՂԵՂԻ

Allegro [tempo rubato. Արագ, ազատ շարժում]

200.

[Առանց շտապելու. *Sostenuto*]

201 Ազգայն.

[Աշխույժ. *Allegretto*]


202. Չորի պար

[Աշխույժ. *Allegretto*]


203. Կարճն պար

Առանց շտապելու. [*Sostenuto*]


Միջակ. [Allegro non troppo] 204. Աշտարակ




Չափավոր. [Moderato] 205. Շախկեր-չուխկեր



Չափավոր. [Moderato] 206. Խնկի ծառ




Չափավոր. [Moderato] 207. Գեթիկ




208. Վարիկ

Չափավոր. [Moderato]




209. Յաման ամի


Չափավոր. [Moderato]



Աշտարակ [Allegretto] 210. Չամբար (քաշկիմակ)



Շանք [Lento] 211. Ուտոմ պար



Հանգարտ [Andante]

Գաղափար [Moderato] 213. Շաղալի

Արագ [Vivo] 214. Վեր-վերի

Արագ [Vivo] 215. Վեր-վերի

Արագ [Vivo] 216. Վեր-վերի

Արագ [Vivo] 217. Վեր-վերի

Գաղափար [Moderato] 218. Պար սրբագույնի

Գաղափար [Moderato] 219. Լոք-պար 692. Միջակ

Գաղափար [Moderato] 220. Լարախաղաց

Միջակ [Allegro non troppo] 221. Լարախաղաց

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԵՎ

ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

- ԱԺ1 *Կոմիտաս*, Ժողովրդական երգեր, Ազգագրական ժողովածու, հայերեն նոտագրությունից փոխադրեց եվրոպականի, առաջաբանով և դիտողություններով՝ Ս. Մեկրյան: ՀԽՍՀ Պետհրատի երաժշտական սեկտոր, [Մոսկվա-Երևան], 1931:
- ԱԺ2 *Կոմիտաս*, Ազգագրական ժողովածու, հայ ժողովրդական երգեր և պաղերգեր, հտ. 2-րդ, կազմող Մ.Աղայան, խմբագիր Խ.Քուչնարյան, Ե., 1950
- ԳԱԹ Ե.Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան, Երևան:
- ԳԳ Գևորգ Գյոդակյան
- ԵԺ1 *Կոմիտաս*, Երկերի ժողովածու, խմբագրությամբ Ռ.Աբայանի, հտ. 1, 1960, 1969, նույնը հտ. 2, 1965, 1969, հտ. 3, 1969, հտ. 4, 1976, հտ. 5, 1979, հտ. 6, 1982, հտ. 7, 1997, հտ. 8, 1998, հտ. 9, 1999, հտ. 10, 2000, հտ. 11, 2000, հտ. 12, 2003, հտ. 13, 2004:
- ԺԽ Ժողովրդական խաղիկներ, գյուղական փոքր երգեր իրենց փոփոխակներով: Խմբագրեց Մ. Արեղյան, մասնակի աշխատությամբ Կոմիտասի, Ե., 1940:
- ՀՆՈՒ *Կոմիտաս*, Հողվածներ և ուսումնասիրություններ, կազմեց Ռ.Թեղլեմեզյան, Ե., 1941:
- ՀՄԽ1,2 «Հազար ու մի խաղ», ժողովրդական երգարան, 1-ին և 2-րդ հիմնյակ, խմբագրեցին Կոմիտաս վարդապետ և Մանուկ Արեղյան: Վաղարշապատ, 1903-1904 և 1905:
- ՄԹ1 *Մինրան Թումանյան*, Հայրենի երգ ու բան, հտ.1, 1972, հտ. 2, 1983, հտ. 3, 1986, հտ. 4, 2005
- ՈԱ Ռոբերտ Աբայան
- ՎՍ Վանա սագ, հավաքածու Վասպուրականի ժողովրդական երգերի, հեքիաթների,առածների և հանելուկների, Ա մաս, ժողովեց՝ Գևորգ Շերենց, Թիֆլիս, 1885:
- ՏԽ Տաղեր և խաղեր, խմբագրեց և կազմեց՝ Ա.Մխիթարյան, Ալեքսանդրապոլ, 1901:
- ՔՄՎ Քնար մշեցվոց և վանեցվոց, ժողովեց՝ Արիստակես վարդապետ Սեդրակյան, Վաղարշապատ, 1874:
- Մանրագրություններում բերված ձեռագրերի համարները Երևանի Կոմիտասյան դիվանի (ԳԱԹ) քարտագրության մեջ ընդունված համարներն են:*

Արևմտահայ ժողովրդական երգեր

ա. Վամի երգեր, գրառված Տ.Չիբուրուց 1909-ին
(տես՝ Նախաբանը):
Չեռագիր ք. 313

Փակագծերում նշվածը երգերը գրառողի
համարակալումն է:

313 ձեռագիրը ինքնաշեն փորրադիր տետրակ է՝ Կոմիտասի ձեռքով սարքված: Վերջին թերթիկի վրա կա նրա մի քննիականոր ղիտադությունը՝ «Ռոդոս տողերը կրկնվում են երկու անգամ՝ թե՛ պարսպետը (նկատի ունի մեներգային մասը) և թե՛ պարը (նկատի ունի խմբական մասը՝ կրկնակը)»: Խոսքն այն պարերգերի մասին է, որոնցում այդ կրկնությունը նուտագրված չէ:

1(1) *Մեկ պզտկնի խայիկի՛ մ կեր:* Խոսքերը, որ «Խարմարեցված» են «Հոյմար» բացակակությունը կրկնակ մեծեղդ այս պարերգին, ըստ թվանդանության, միջնադարյան ժողովրդական պոստյի կամ պոնիի փշշյան են մեմակյաց ճգնավորի մասին, որի սրտում անպասկելորեն բույն է դրել սիրո զգացումը, և երիտասարդների՝ տարբեր կրոնների պատկանելը խաչընդուտ է նրանց սիրո երջանկության ճանապարհին (տես՝ Գ.Շերենց, Վամա սագ, Թ, Թ., 1899, էջ 33-36 կամ Ա.Մեսայանյան, «Հայկական միջնադարյան ժողովրդական երգեր», Ե., 1956, էջ 196-205 և 513-522): Խայիկը - հայ բառի նվազակամն է: Նման սկզբնավորությունը կա, օրինակ, մաև հետևյալ տարբերակով.

*Մէ պրտրկնի մարդիկ մ կեր,
Ամապատս վանք կը մընէր,
Օր կորնիէ կուտ մը կուտէր,
Կէսն աղբրտաց բաժին կիսանէր:
Տրկող ըսանկով կեպզ կը կտրէ,
Պէտիկի ռոնով փուշ կը ընտղեր.
Ինք կը գրէր, ինքը կկարդէր,
Չյամ իրիկուն աղօթք կանւր...
(Ա.վ.Տ-Սարգսեանց, Պանդուխտ վանքնին,
Կ.Պ., 1875, էջ 92):*

Եղանակը Կոմիտասի գրասած մի ամբողջ
չարք «Հոյմար»-ներից որևէ էական տարբերություն
չունի:

2(2). *Հոյ մարե, Գլաթա զզրո դարեր:* Նման սկզբնավորությամբ երգերը Կոմիտասի գրասումներում տասնյակից բավականաչափ ավելի են: Այստեղ շարադրվածը այդ կրկնակով սկսվող ճախարակի երգ է: Գլաթը գրած է եղել Խ-ով, դարձրել է Գ: Եթե անգամ անույն վիճակի համարենք, պետք է, այնուամենայնիվ, ասենք, որ խոսքերի Ա տողում ընդված հակիրճ նկարագրությունը համապատասխանում է (զանազան ուսումնասիրություններից դատելով) Վաճաճ լճի հյուսիսարևմտյան ափին ավելակված նշանավոր Խլաթ բաղադրի, պատմական Բզմունիների մախարությունան ընդարձակաբար քննական տեղան-

քին (զրո դարեր պետք է նշանակի թեք զատիկներն կամ մերկ լեռնագագաթներ): Գնուակալի աման:
*Նույն երգի՝ Թումանյանի գրասումն մեզ կա
նաև հետևյալ ըստատողը՝*

*Ոտսամա քալար սարեր,
Չիմ կամա ճախրակ մաներ.
Ճախրակի սոզ գյո սոզ էր,
Ճախրակ մանող գյո՛ ծուտ էր:*

Մեղեդու ելևեջային կառույցը համկարծաբանական է՝ հիմնականում նույն ելևեջների թեթևակի, «քմածին» տարբերակումներով: Ուրիճը նմանակում է ճախարակ մանելու շարժումը:

3(3). *Էճ դիզան:* Հարսանկան զվարճակի «Խանելուններից» է, տես ԵԺ 10: Բնագրում նշված չեն չափ կամ տակտոսարժանում, քայց անհամաչափ, փոփոխական մետրի առկայությունն ակնհայտ է: Ի դեպ, այդպիսի մետրակառույցի պայմաններում (մասնավորապես ֆրագմենը եզրափակող կարճ տակտերի շնորհիվ) այս երգի կատարումը առավել մոտենում է թովանդակության խոսքերին արտաբերմանը: Մ'տամանք՝ մի տեսնե՛ք:

4(4). *Խայն էր խայն և Էճա թագ վիր թագ մման էր:* Թվում է, թե երկու երգ է՝ մեկ համարով գրված, տես նաև ԵԺ 10-ում հարսանկան երգերը: Իրականում սկզբնակամ՝ ազատ չափով, դաբոյաղ, ազդարարական բնույթի հատվածը մի յուրատեսակ մախարան է թագավորի բուն զովերգությանը, երկուսն էլ առանձնանում են համեմատաբար առատ և ազատ մեղեդիականությամբ. առաջին հարթության վրա է գալիս ոչ թե խոսքը (նկչպես շատ այդ դեպքերում), այլ եղանակը: Չեռագրում կա Կոմիտասի նշումը՝ «տրագիկն»: Անշուշտ, այդ նշումը վերաբերում է նրա ունկնդրած կատարմանը, այլ ոչ թե կատարողին տրվող մի համեմարարական է, նույն երգի՝ 1914-ին երգված տարբերակում երկու հատվածների կատարումը նշված է Ծանր և Ջվարթ բառերով:

5(5). *Թագվորի մեր, տյուս աղի:* Տես ԵԺ 10-ի հարսանկան երգերը: Ինչը վիճի՝ նշանակում է Ինչ և ինչ: Բնագրում կա նաև հետևյալ ծանոթությունը.
«Շատախցիք՝ Սպարկերտի և Վանի զակատակների վարիանտը»,

*Տյուս էրի, հայ տյուս էրի,
Թագվորը մեր, տյուս էրի:*

6(6). *Թագվոր, ի՞նչ բերին քյո մման:* Բնորոշ է փոփոխվելով մետրով ազատաճես մեղեդիականությամբ: Տես նաև ԵԺ 10-ի հարսանկան երգերը:

7(7). *Թագվորինը ո՞վը կպիտեղը:* «Ը» ենչյունով մակարտոք վանկեր ստեղծելը զավառական երգեցողության մի հատկանիշ է: Այստեղ համապատասխան մոնչ ունենալու համար դիտարկելու պահպանված է այդպիսի արտաբերությունը: Ի դեպ,

միտաժամանակ նշված է երկու հնչյունը մեկ վանկով, սառնց հավելյալ ը-ի երգելու հնարավորությունը (կտազգծերով ձայնակապերը): Կոմիտասի գրառումներում կամ նման հավելված ը-երով գրության մի քանի այլ օրինակներ կա: Ըստ երևույթին այդպիսի արտաբերությունը համարվել է նաև տեղական երգեցողության մի հատկանիշ: Կեր կամ գեր՝ այստեղ նշանակում է գար, Թագում՝ քազ:

8(8). *Էսօրը Փրփուզին տխտը եմ:* Ասված էր նախաբանում: Ծնոտ-ազր:

9(9). *Փռքփրք կուզյա պար քոր սարեն:* Այս չափազանց հակիրճ մեղեդու խոր արտահայտչականությունը պայմանավորվում է էինմածայնային իջնող եռալարը (ձ, ճ, ջ) երեք անգամ մետրական նույն տեղում ընդգծելով և ամեն անգամ նոր ձևով շարունակելով: Նոտաներում սառնց խոսքի գրված տողը հավանաբար 2-րդ նախադասության կրկնությունն է՝ առաջին տառը հավելյալ ը-ով արտաբերելով (փռքփրք - կրկնաբերքի), կարկերալով գալիս է:

10(10). *Կակզմանա ձորին եմ:* Նժան՝ մեքենայաբար տեղի ունեցող տարրերակումը մեղեդիակերտման (երաժշտական մտքի զարգացման և ձևի ընդործակման) կրավորական միջոց է:

11(11). *Ազփոտ խոտ քարի յուտուն:* Պարունակում է քաղաքային-ժողովրդական կամ մասնագիտագլավ երաժշտական մտածողության (մասնավորապես՝ ներդաշնակային ինքին) պարզունակացված տարրեր՝ լայն երաժշտական կենցաղի համար ոչ շատ տարօրինակ:

12(12). *Դե, հե գրզզ, գրզզ:* Գրառողի մակագրությունն է՝ «Շառախնցոց»: Շառ գործածված այս խոսքերով երգի այլ մեծուհներում մարտաշունչ ոգին ստացվել է միալար, հավասարաչափ «մոտոսային» շարժումի: Այստեղ նույն տրամադրությունը ստանալուն նույնքան օգնում է խասն (3+2) մետրական շեշտվածքը: Եղանակին զգալի ինքնատիպություն է հաղորդում խիստ քացատիկ հանդիպող՝ մեծ տեղիքում օժանդակ ենհանկետով և ցած 5-րդ աստիճանով մատր բնույթի ձայնակարգը:

13(13). *Հինգ էծ ունես:* Ասված է Նախաբանում, տե՛ս նաև ԵԺ 10:

14, 15, 16 (14ա, բ, գ). *Մեյ քրնն արաղ քյաշք. Լաճու մոր շարթաթ քիթիք. Լաճու մոր կրզզմը ճոնոց:* Կենցաղային երգ է, միևնույն բլախամարով գրված է երեք տարրերակ և, ինչպես այլ շարք այլ դեպքերում, խոսքերի բարբառային արտասանությունը տեղ-տեղ պահպանված չէ: Մի շարք երապարակումներում նման մեծուհներն անվանված են «ծննդկամի երգ»: Նորածինը տա՛ւ է, թե՛ աղջիկ... Սոցիալական պատճառներից թխած, իսկ ավելի շատ՝ մախապաշարումներով պայմանավորված այդ խմբի «կարևորությունը» այդպիսի «ծննդկամի երգերում»

երբեմն ներկայացվել է գոնեկության հասնող չափազանցություններով, անշուշտ, կատակով: Ա տարրերակում երկրորդ քառը գրված է «ջրնեմ», գոնե և՛ «ջրարեն»: «Ճրա» (գործածվել է նաև՝ ճերա, Ճիրա ձևերով) կամ «Ճրա» (Ճոդ) քառն է, որ ցատ Ա.Մակաչյանցի՝ նշանակում է թունկաբո մեծ կապի աման, լայն բերնով, որի մեջ գինի են ածում»: Բնագրի 38-րդ էլում «Կոմիտասի կամ Չիբուռու ձեռքով մոտավորապես գծապատկերված է վանկների մոտ գործածվող այդ ճրուն կամ ճոնին, որ ունի հեղուկը դուրս «բաշելու» սիֆոնային հարմարանք: Բ տարրերակի մեղեդու հետաքրքրական է երկրորդ ֆրագի կրկնումներով (թվարկում), որ հայ ժողովրդական քամակուսության մեջ խոսքի աստճման հատկությունը մեղեդուով դրսևորելու ընդունված միջոցներից է :

17(15). *Աղա լաճ, ամիրա լաճ:* Մանկական խաղերգ է. երեխան պետք է կարողանա արագ ընտրել և երգելու ու հանգը պահպանելով՝ սակ էր երևակայական ձիու անունը. որքան գրավիչ, հետաքրքրական ու գեղեցիկ աճում՝ այնքան լավ: Նժան մանկական երգերի ելեշչակազմության մասին ասված էր Նախաբանում:

18(16). *Ասավնուտն աղոթքոյին:* Թումանյանի քննազուտն (ՄԺ, հ. IV, էջ 257) նշված նույն երգին Չիբուռու կողմից տրված ժամբային բնութագիրը՝ *Չրե կուծի հաղ:*

Երե այդ «խաղը» գուտ որպես մեղեդի, որպես երաժշտություն որևէ կերպ չի առանձնանում այլ երգերից, իր ժամբային պատկանելությամբ ու խոսքային բովանդակությամբ քացատիկ ինքնատիպ մեծ է. ցույց է առաչել, թե ինչպես ժողովրդական երգը իր բեմատիկ ընդգրկումով կարող է մտքը գործել մարդկային (տվյալ դեպքում՝ կնոջ) առօրյա կենցաղի և քառ այնմ՝ ինտիմ վերապրումների մույնիսկ ամենախոր ծայրերը:

Կում՝ «Փրք» կոչվում է ամուսնու երկու կամանցից մեկը մյուսի նկատմամբ: Կոմիտասի քնագրում այդ քառը հակիրճ քացատրված է՝ *հարծ:* Հասկանալի է, որ գավակ ունենալով «մարդությունն» այս դեպքում ճակատագրական իմաստ է ստացել: Խոսքերի երկրորդ երկտողը (և ցատ այնմ՝ մեղեդու կրկնության նշանը) քառերիցը Թումանյանի հիշատակված քնագրից, այլպես խոսքերի իմաստը չէր քացահայտվում: Խոսքային բովանդակությանը հասնապատասխան՝ փորո ծավալում ազատ հոտը մեղեդին իրոք ողբազին արտահայտություն ունի: Այստեղ թերված 313/17-ում այս մեղեդին տպավորիչ է մանավանդ «աման» քացականություններով: Նույն երգը Չիբուռուն Կոմիտասի համար կատարել է նաև 1914-ին Կ.Պոլսում: Կոմիտասն այդ գրառումը (630/10թ) կիսատ է բռնել, ցատ երևույթին նկատելով, որ ստացվում է նախկինում գրածի գրեթե բառացի

* Օրինակ՝ «Գացեք տեսեք ինչն է կերի զինչ», «Էտո ու կեռը կորն ունես», «Թիսո ու սազը, «Զա սև, սևալոր մարե» և այլն:

կրկնուրյունը (երկրորդ անգամ Կոմիտասը սկսել է գրել երկու անգամ փոքր տողադրույուններով, 6/8 չափով):

19(17). *Լվերն եկին ձրան-ձրան:* Ժամրային-թեմային հատկանիշներով աշուղական երգիծական հորինվածք է, քացառված չէ, որ ունենա փոխաբերական իմաստ: «Վանա սագ»-ում (Բ, էջ 14) կրկնակը քառատող է՝

*Հա՛յ լվեր, մայրս լվեր,
Կարակնտող կարմիր լվեր,
Գիշեր կեցնեն ձղներն ի վեր,
Ցերեկ քաշվեն սներն ի վեր:*

20(18). *Լուսնու մանն:* երգիծական երգ է, քաղաքային կենցաղում ընդունված մեղեդական մի կարճ դարձվածքի ամենը կրկնուրյունը կատակաբան-ծաղրական մեծապարի երգ: Բովանդակության էականը խոսքն է, որը, հավանաբար, ինչ-որ կերպ մաս պետք է դրսևորվի պարային շարժումներում և որը, ցավոք, թերի է: Մեր պատկերացմամբ պակաս են նախաբանային երկտողի 2-րդ տողը, որ պետք է քացահայտեր չորս «եղերաների» համադրության մեջը (ըմկերացան, ինձանացան...) և այդ «եղերաներից» ամեն մեկի արարը (կա միայն ճանճիմը) ու դրա նկատմամբ մյուսների կամ պատմիչի վերաբերմունքը: Ըստ երևույթին երգում ինքը չի իմացել լրիվ խոսքերը, որովհետև Թումանյանի համար երգածում ևս նույն թերությունը կա, քնն մասամբ լրացված է՝

*Լվերն եկան զեղին-մեղին,
Եկան շարվան փեխի բեղին,
Երկրոցուցին հարսի լեղին:*

եռատողով, սակայն դա նախորդ երգի տներինց մեկն է և ներկա երգի հետ կտալ չունի: Հավանաբար, քանահյուսական ժողովածուներում կարելի է գտնել և այս երգի լրիվ խոսքերը:

21(19). *Լաներ, մաներ, մաներ, Հոխն:* Եղանակը հիշեցնում է նշանալիոր «Տար, զմզմ» մարտաշունչ պարերը, այս ևս մնաք բնույթի պարերի եղանակ է: Բնագրում կա փոքր-ինչ զանազանվող տարբերակ: :

Ինչպես տեսնում ենք, «մակարայն»-ը այստեղ էլ կա՝ «ուր-ը», մեղեդու մեջ այդ վանկը հինգ երկու հնչյուն ունի: Այլ է երկրորդ տան խոսքերում «Վարագան» քառի պատճառով գոյացող հավելյալ վանկը, որի համար տակելի առաջին հնչյունը (սա) պետք է երկտակվի, դառնա 2 ութերորդական: Այս քանը Կոմիտասն այստեղ (և այլ նման դեպքերում) նշել է խազագրության «ուր» նշանով՝ հնչյունի մանրացված կրկնություն: «Վարագան ճամբախ տայ վեր

գտակ» նշանակում է Վարագ տարի ճամբապահին տակն ու վեր (ընդհանրապես՝ շատ) գետակներ կան: Հաջորդ տողը, ըստ երևույթին, Լուսնույ մետակ՝ թեթև հագնվածքի մասին է:

22(20ա). *Նար, հոյ, սարերու դաստա գյուլ են:*

23(20բ). *Կարև, մանն, կարգա գիս:*

Միևնույն եղանակով երկու տարբեր խոսքեր են երգվել: Հնչյունների մասին առկա վերը: Տանդուրամեն կամ՝ քանդուրամեն (քրդ.) – նշանակում է «պարելու իրավունքը իմն է»: Այս երգը գրի է առել մաս 1914-ին (թ. 60, «Տարը լիլա՝ »):

24, 25(21ա, բ). *Խարածորձն հերթին գիշեր:*

Հետաքրքրական են լավ պահպանված տեղական գծերով՝ թե՛ մեղեդիում և թե՛ խոսքերում: Մակագրել է «Պուլիկը խաղացներով այց ու ձախ». «Մեր գյուղի փոխակ»՝ Վասպուրականում Համարձման տոնի այս ծեսի մամրամասն նկարագրությունը տես «Վանա սագ» Ա, էջ 86-88: Վիճակահամոթյան երգիչի մասին տես ԵԺ 10-ի Նախաբանը: Քիտր – քուր:

26(22). *Մայրան գնաց դուռն ի հերին:*

Մակագրել է «Վանա Ծննդյան ավելուխ»: «Վանա սագ»-ում (Ա, էջ 79) կա հետևյալ ծանոթագրությունը. «Երազգայնից գիշեր յուրաքանչյուր քառի մանուկները խումբ-խումբ դուրս կուգան տանիքների երդիկներից կախ անելով դրմից շինված լսատեղը և կերգեն այս երգը»:

Այստեղ, ինչպես և դեռևս Գ.Մրվանձույանցի «Համով-հոտով»-ում, բերված են քաղականին ընդարձակ խոսքեր, որոնց Լակյան մասը կազմում է ներս տառնալու համար պատանիների խնդիրը՝

*Մամիկ, մամիկ, ես քեյ ծառա,
Մոլեղ խազի որ ճուլկա,
Չյուն մարզնի դուս մեկ կնա,
Իմ ընկերներ ճամփի արա,
Մեր փալը պե, քյոմ թող մնա...*

Կա մաս ծանոթագրություն՝ «Այս վերջին տունը կայքան կրկնում են, մինչև տան տիկնեղն ըրանը լսազերին ձեք լեցնի և մրգեղեն տա»: Ծննդյան ավելուխների մասին տես ԵԺ 10, ինչպես և այստեղ՝ ք. 41, 42:

27(23). *Քյուլե, քյուլե:* Բնագրի ծանոթագրությունը՝ «Վանա ճողի երգ, բարեկեցիական ժամանակ. ճոճանակ թոնելու, քշելու երգ»: Որոշ առումով ծխական բնույթի երգ է: Եղանակը քնակա-

մարտ վերադարձում է ճոճանակի շարժման ռիթմը, խոսքերն՝ ուրախ, կատակաստան, բոլոր տողերն սկսվում են «Քյուլե-դար» քացական-չոքություններով: Վերջին երկտողի հավելյալ վանկերի համար ֆորգի սկզբնական հնչյունը կիսավաճ տեղությամբ կրկնապատկվում է (պետք է դրված լիներ սող նշանը): Եղանակի 3-րդ ֆորգը ևս 1-ի նման կարող է

* Գրության այդ միջոցը լայնորեն կիրառված է ձեռագիր խազավոր շարակնոցներում, հատկապես վերջձայնի շարականների սկզբնավորություններում:

կրկնվել: Նույն երգը կա նաև 1914-ի գրառումներում (p. 43):

28(24). *Ածին մածածին*: Վաճառ հար- սանկան երգերից: Կոմիտասի մակագրությունը՝ «Հարս համելու ժամանակ»: Բնույթը կատակային է, սավորաբար ավարտվում է «Տամեն՝ թող տանեն, Ձատկին կրեռեն» թեմայով, մասնավորապես այդ- պես է երգել Չիբուկին Թումանյանի համար (տես՝ ՄԻՅ IV, p. 129, 130 և ծանոթագրությունը)

*Ածին մածածին, զրնզրկի,
Պանցր Ասպարածին, զրնզրկի,
Պատեր ծակեցին, զրնզրկի,
Նարսենիկ խամիցին, զրնզրկի,
Տարամ՝ թող տանեն, զրնզրկի,
Ձատկին կրեռեն, զրնզրկի:*

Այստեղ մեղեդիային ավելի ձևակերպ տարբերակ կա 1914-ի գրառումներում (p. 46), տես՝ նաև ԵԺ 10/80՝ «Տամեն՝ թող տանեն»:

29(25). *Դեղձ թակ սարերում*: Դեղձ-մեղու: Տես՝ այստեղ p. 47 և ծանոթագրությունը:

30(26). *Հրոջ գյուղ, հրը վարդ*: Այնույժ շարժումով, ուրախ, ընդհանուր գլուկնդի եղանակ է: Ուշագրավ է առաջին կեսում հենչումների կտրտված (staccato) և երկրորդ կեսում՝ կապակցված (legato) կատարումների հակադրումը (առաջին կեսը կրկնակ է, կատարման այդ կերպը զգայուն է հավելադրվող «ը»-երի շնորհիվ, երկրորդ կեսը խոս- քերի եական թովանդակությամբ երակնում է): Տես՝ նաև 1914-ի գրառումներում p. 50, որի մեղեդին ավարտվում է «զուգահեռ» միճորի հիմնահնչյունով:

31(27). *Մեկ օր մենք ժողվանք գյացինը*: Տղամարդկանց գլուկնդի եղանակ: Ֆրակների սկզբի կշռության պատկերը առաջ է բերում դրանց ազատ, ասերգային կատարման անհրաժեշտություն (նշել ենք ուղիղ փակագծերում): Երկրորդ ֆրակի մեծ հատվածի համար գրել է՝ «Ույնը» և նուսաներն ու խոսքերը չի գրել, ամբողջաբերից նույն երգի՝ Թումա- յանի գրառման հիման վրա: Այս երգը կա նաև ԵԺ 9/101 և ԵԺ 11/64 (տարբերակներ), տես՝ նաև համապատասխան ծանոթագրությունները, ուր բեր- ված են համեմատաբար ընդարձակ խոսքեր:

32(28). *Սոխորան չէր*: Ըուրջվարի երգ՝ կենցաղային-ծաղրական բնույթի խոսքերով: Պիճո թան՝ չորաբանը: Սկզբից գրած է եղել «թիմբան»։ Թումանյանի գրառումով, ինչպես և Ս.Մելիքյան - Գ. Գալոյաչյան «Վաճառ երգերու»՝ «պիմբան» է և վերջինում քաջատրված է՝ պանրի մանրուցը, նաև կա ավելի երկտող՝ «Սոխորան լցին կըծեր՝ որբերն նկան չանց ճըծեր»:

33(29). *Քյա սև, սևավոր մարե*: Էսպես չի տարբերվում ԵԺ 11/199-ից (Քյա սև, սևավոր աղջիկ), որ նույնպես Վաճառ բանասիրության մոտ է:

Վերջին տակտի «չարկով» կատարումը առաջ է բերելու այդ տակտի ընդարձակում, դանդաղեցում: 1914-ի գրառման մեջ՝ p. 61, այդ տակտը ավելի որոշակիորեն ընդարձակված է: Էջմիածնի ընտանա- մի երգչախմբի համար Կոմիտասի վաղագույն դաշ- նակումներից մեկի նյութ է այս երգը (ԵԺ 5): «Կակա, մամու, կարգազ գիս» տարածված խոսքերը երգվել են տարբեր եղանակներով, տես՝ օրինակ, այստեղ p. 23:

34(30). *Ելը, ելը... կայնի խաղա*: Այս համրահայտ երգի միջնացից հեռու գրաված տարբերակներում (հիմնականում Կարսի և Վանի, տես՝ ԵԺ 11/154) խոսքերով դրսևորվող, բանաս- տեղծական՝ և մեղեդիով ստեղծվող՝ երաժշտական կերպարը գրեթե նույն է. քայց ուրիմ ու ելևեթի նրբին տարբերությունները, ինչու չէ՞ նաև ճայնակարգի գունային խաղերը շարունակ նորանոր երանգներ են հաղորդել երգի հերոսուհուն. մագաճը՝ մեկ այսպես, մեկ այնպես, մեկ ավելի, մեկ պակաս, մեկ նրբորեն «թագված», մեկ քաջահայտ՝ միշտ հումորով օժտ- ված... և այդ կերպարը միշտ զայտուն է, միշտ պարզ «չաշախիկ»: Պատահական չէ, որ երգն ամբողջա- պես և եղանակն առանձին, առանց խոսքի մասնակ- ցության, կոմպոզիտորական մշակման նյութ են դարձել քաճակաբով անգամ: «Չեն կրնա խաղա» տարբերակի (ԵԺ 11/145) կոմիտասյան մեմբրազային մշակումը՝ ԵԺ 1:

35(31a). *Սամը կրծիծեմ*: Մակագրված է՝ «Շատասխ սանուր կըրտու ծծեծու երգ»: Խոսքայն՝ խիտ իրարաց, միասին: Հազարը խոսքերից զրված է միայն «Մեր տան խոս արտ կորնկյան» և շարունակված էլ թերևս աշխատանքի հետ անմիջա- կան կապ չունենալու պատճառով: Մ.Թումանյանը նույն երգում գրառել է նա մի քատատող՝

*Սամը կրծիծեմ խեխան-բեխան,
(.....)
Մեր տան խոս արտ կորնկյան,
Շիրա շապիկ խեխ կըրնկյան.
Ջուրաք արեք տերտերկնկյան՝
Կտրակ իմ ձեռաց արպնքան:
(Թույլ մատույ)*

Բնագրում նուսաներով արձանագրված է աշխատանքի «հեճյունային» ուղեկցությունը, երբ երգը չի հնչում:

36(31բ). *Օ, տայ Ակո*: Կատակային-ծաղրա- կան երգ: Ակո-Աստիկո-Աստվածատուր անունն է: Տալ-տալի կամ դալի բառն է, այստեղ՝ անլուրջ, վնուշ, թեթևալիկ: Կոմիտասին հետադրորել է զվախվորա- պես եղանակը, որ հայ ժողովրդական երաժշտության մեջ սակավ համըղիպը արևելյան հենչյունաչափ ունի: Նույն երգի մի այլ տարբերակ բերված է այստեղ p.91: Չեռագրում նշմարվում են նաև մերոպանկման ուրվագրումներ: Տես՝ նաև ՄԻՅ IV, p. 228, 229:

37(32). *Լսող մեր երեք 'միկ սասաց:* «Շարքա-
յին» եկեղեցականների վարքը համախառն է «ձեռք
առնվել» և այդ կերպ դարձել քննադատության
բիրխալս:

38(33). *Կտու ու կնք կորեկ ունեմ:* Տնն մակ
Եժ 10, Եժ 11, դարձալը Վանա քանահայտությունը:
Սկզբի թեթի տակաղ «հայվից դուրս», արտասանա-
կան յուրատեսակ ճախարան է, մետրադիմական
կանոնավոր ընթացքը (զարկերը) սկսվում են 6/8
տակտից: Նման սկզբնավորությունները քնորոշ են
հայ և մասնավաճող արևմտասիայ գեղջկական
(օրինակ՝ վիպական, պատմողական) երգերին:
ՎԱՍ/84-ում «Կտու ու կնք»-ը անվանված է «պու-
րացիների պար», և կա հետևյալ ծանոթագրությունը.
«Վերցունված է նաև քաղաքացի երկուստայաց մեջ.
դրոնք խմբով երգում են մի շատ դյուրեկան
եղանակով, կրկնելով միշտ վերջին տողերն, օր.
ցանկելու խամար, ուտելու խամար»:

39(34). *Նայու աղբիկ:* Նման «հարց ու
պատասխանով» իչ միայն հայ, այլև քուրդ կամ
ասորի գեղջկուտու բարեմասնությունները երևան
բերող երգերը հայ սիրային բանահյուսության մեջ
առանձին ենթախումբ են կազմում: Եմթարգում է, որ
այս դեպքում «խայու աղջկամ» դիմողը քուրդ
երկուստարդ է: Բնագրում առանց պատասխանի
նշված են նաև «Քյո բաժ տեսնամ» (խազած է) և
«ծծեք տեսնամ» տները:

40(35). *Ըս օրես երգազ ըմ են տխմր:*
Կոմիտասի մակագրությունը՝ «Կառկառու բարբա-
ռով»: «Սասնա ծռեք» վեսից այս հատվածը Կոմի-
տասի գրառումներում պահպանվել է երկու օրինա-
կով՝ ներկա 313/35 սևագրությունը և 328/21 սևաթա-
մաք մաքրագրությունը: Դրանցում էական տարբե-
րություն չկա, երկրորդը փոխադրված է երգելու
համար հարձար տոնայնության, ռիթմի առումով
փոքր-ինչ ավելի մանրամասնորեն է խմբագրված և
ունի կատարման համար ավելի ցուցումներ : Հնարա-
վոր է, որ այդ երկրորդը գրված է որևէ որոշակի երգչի
հանձնարարելու նպատակով:

Ներկա քնագրում արդեն ձեռնարկել է
ասերգային ֆրագմենտի ռիթմը որոշակի դարձնել,
առաջին՝ «Ըս օրես» և «երգա ըմ են տխմր» խոսքերի
համար դեղել է տրիտիկ նշան, քայց դրանից հետո
որիչ ոչինչ չի նշանակել (այդ ֆրագմենտ մեմբ
ակնառու դարձրինք նուստների վերևից դրված ուղիղ
փակագծերով):

Բացառիկ կարևորության պատճառով նույն
երգը բերված է նաև «Շամրային ժողովածուում» (Եժ
10):

թ. Վանի երգեր, գրառված Տ.Չիթունուց 1914-ին

Փակագծերում նշվածը՝ ք. 630 ձեռագրի
էջերն են:

41 և 42(1). *Մայրս գնաց դուրս հ'էրի:*
Գրառված է ք. 26-ից, աննշան զանազանությամբ:
Նշված է՝ «ժարման երևոն, ճաշեն ետք»:

43(1թ). *Քյուքը, քյուքը:* Գրքեր ք. 27-ի
կրկնությունը: Գրված է այս դեպքում գործածված
«առնել» բառի նշանակությունը՝ «առնել՝ երգի
առաջին մականադատությունը վերջին բառի մնակ
երգին հետո կրկնելով «առնելը», որից հասկացվում է՝
կրկնությունները կատարվում են երկուսով կամ
խմբով:

44(2). *Արև, արև, տյուս ելի:* Մանկական որևէ
խաղի, գուցե և պարզ հաշվարկախաղի երգ է:
Բնագրի տարանջատում նշումներից վերականգնեցինք՝
խոսքը լրացնելով նույն երգի՝ Մ.Թումանյանի գրառու-
մից: Նման երգերում մեղեդու սահուն, աստիճանա-
կան ընթացքին քնորոշ են նաև դիատոն քառաստի-
ճան քոլիքները՝ որպես առավել պարզ արտասիյա-
վող և դյուրին իրականացվող ելևէջներ: Բացառիկ է
եզրավակող մոտիվը, որ նպատակային անցում է
դեպի գործողության հետագա շարունակումը: Բնա-
գրում կան այդ մոտիվի՝ Կոմիտասի գրառած մի
քանի տարբերակներ: Այս երգն օգտագործված է
դաշնամուրային «Մանկական նվագներում» (Եժ
6/136): Տնն մակ Եժ 10:

45(2թ). *Արև, արև, դուս արի:* Նախորդ երգին
միացված՝ օգտագործված է «Մանկական նվագնե-
րում», տնն Եժ 6:

46(3). *Ածին, մածածին, զքնզրիկ:* «Հարսին
հանելու ժամանակ՝ հորանց տինց: Չընզրիկ է խաղի
(այսինքն՝ երգի, Ռ.Ա.) անունը»: Տնն մակ 313/24
տարբերակը, այստեղ ք. 28: Երկուսն էլ ուշագրավ են
իրենց «կամակոր» մետրադիմով: Խոսքերի
տարբերակներից մի նմուշ.

*Ածին, մածածին, զքնզրիկ,
Եկած կտամին, զքնզրիկ,
Տարան, թող տամին, զքնզրիկ,
Չատկին կրեթին, զքնզրիկ,
Կամորդ տեղում, զքնզրիկ,
Դեղին բներով, զքնզրիկ:
Բներ – բուն – կարճավիզ գուլպա:*

47(4). *Դրդեզ թավ սարերում:* Կամանց
աշխատանքային երգ է: Կոմիտասի մակագրությու-
նը՝ «Մանկու ձևով շարժում» տնն մակ ք. 29(313/25)
տարբերակը: Ուշագրավ է ճայնակարգերի զանազա-
նությունը:

48(4). *Եզ բարև:* Հարսանական կրկներգերից
է: Երգողի՝ Տ.Չիթունու քաղաքությունը՝ «Էզ բարև
այգում՝ քարով զլա, քարիքով» (այդ երգի տարբե-
րակը տնն ՄՅ՝ IV, էջ 140-142) համազօր չի բովում:
Թերևս «Եկ» է և վերաբերում է զուգված թագավորին՝
քարով ևս գալիս կամ գալը քարի լինի: [Էդ՝ այգն է,
սա արևածագը դիմավորելու հարսանական ծեսի
երգ է: - Գ. Գ.]

49(5). *Թազվոր, ինչ բերեմ քո մնամ:* Կոմիտասի ծանոթագրությունը՝ «իհեսային ամիլելու ժամանակ: Առաջին ֆրագը կա մաս հետևյալ շարադրությամբ՝ տես ք. 6 (6). մեղեդու մետրական շարադրման ազատությունը երկու դեպքում էլ դրա արտահայտությունը մոտեցնում է խոսքայինին:

50(5). *Հըմ գրույ, հըմ վարդ:* Խորհրդարկի կրկնակ է, կա մաս ք. 30(26) տարբերակը:

51(5բ-6). *Հոյ մար, քանթ մար:* Խոսքի և ելևէջի միան տարբերակումները բնականաբար գոյանում են մեկ կատարման ընթացքում: Տես մաս ԵԺ այլ հատորներում՝ հոյմար-մերը:

52(6). *Լուսնակ անուշ բոլոր ա:* Եուրջվարի հատված է:

53(6բ.) *Ճաշիկը, դու փքթա:* «Լամա ժողովրդական երգեր» ժողովածուում (Ս.Սելիքյան և Գ.Գարդայան, Ա., էջ 9, Ե., 1927) այս խոսքերով երգը վերնագրված է՝ «Քողմնի երգ. կենտապար» և ունի հետևյալ մեկնաբանությունը. կերակուրը դաշտ տանելիս գեղեկուհին, երապուրվելով դաշտային միջատների թրղզոցով, սկսում է պարել նրանց նվազկցության տակ և երգել՝

*Ճաշիկ, տու պաղի, սարակ, տու քաղի,
Ձարկ, բոլորնի, զարկ, տու զարկ՝
ես խաղով:*

Ձարկել՝ նվազել. *խաղալ՝* պարել իմաստով: *Սարակ՝* ուրիշի արտում օրավարձով կամ փոխարինմամբ աշխատողը:

54(7). *Ռեհան եմ ցանն խտներով:* Հնչյունի կրկնությամբ առանձնահատուկ արտահայտչականություն ստեղծող շուրջպարային մեղեդու օրինակ է: Ելևէջով մոտիկ «Հինգ էծ ունեմ» (այստեղ՝ ք. 13) և «Եկան, եկան Մոկաց հարսներ» (ԵԺ 10, 209) և այլ կատակերգերի:

55(7բ). *Յարթոյ, յար:* Կոմիտասի մակագրությունը՝ «Կարկատի ոճով, շուրջպարի երգ»: Հնչողը ծանոթացումը պարզաբանում է պարտադրյալ առանձնահատկությունը՝ «Տեղեզտեղ տուտուզա, կուտրտելով ոտները, շունկները մի ձայն, մի աջ՝ իրր թե կուտրած ոտքեր ունցեողի մնամ, տնազ ամել»:

56(8բ). *Խաչն էր խա:* Տես այստեղ ք. 4(4): Բնագրով վերջնական տարբերակը:

57(9բ). *Նարիկը:* Քրդերեն կրկնակով: Պարերգ: Հիմնական տունը գրված է երկու տարբերակով՝ Ա և Բ, որոնք տարբեր ձևով են կատարվում. Ա տարբերակի համար նշված է, որ նույն մասնադասությունը կրկնվում է խմբով. հետևում է երկրորդ մասնադասությունը միայնակ և խմբով և ապա՝ կրկնակը խմբով: Բ-ի կատարման կերպը ինքնու-

տինքյան պարզ է՝ ամեն մի երկու միայնակ կատարվող մասնադասությունից հետո՝ խմբական կրկնակը:

ԺՖ/173-ում կա խոսքերի հետևյալ տարբերակը՝

*Դու կըրես յանա՛յանս,
Մարդու՛ ասա՛ դոնիկ քանս.
Որ մըրթ ճի մըրթ թե դու՛շամն ա,
Տարի՛ մ բոլոր խիվանդանս:*

2-րդ տողի տարբերակ՝
Քյո մոր ասա թող տղյուտ պամն (9/1)

58(10բ). *Ասաց՝ դիքար:* Բնագիրն ունի «Շեկ դիքար. գեղրուկ ասեր, խոսելով, արտասանելով, երգով» վերնագիր: Դիքար՝ գեղեցկուհի: Երկխոսության այսպիսի վերապատումը ևս սիրո երգերի մի ենթաբաժին է, որ որդեգրել, զարգացրել և տարածել են գլխավորապես աշուղները («Ասի... Ասավ...»):

59(11). *Նար հոյ... Տո տղա:* «Հոյմար» կամ «Նարոյ» կրկնակներով երգերի մասին ասված էր ԵԺ հատորներում: Այստեղ այդ կրկնակը գուրդուլել է սիրային պատմությանը, որ, սովորաբար, զուգորում է «Տո, տղա» և «առջիկ, առջիկ» բաղկացուցիչները այս կամ այն չավիվ սրամիտ սյուժեներով: Տ.Չիթումու երգածը մի մեծան պատմությունից հատված է միայն (երկրորդ տողը պակաս): Բովանդակության կրկնակ այն է, որ տղան «չաշտում» է ոչ թե «մարսի արով», այլ հենց իրեն՝ իրեն համոզիմանող աղջկան է նայում:

60(11բ). *Տարք լիլա:* Տես այստեղ ք. 23: Ըստ ք. 23-ում բերված եղանակի՝ երգվում է հետևյալ տեքստը.

*Գամարածու մի՛ տա զիս,
Կերթա սարք՝ մոտն զիս:
Նախորդ մարդու մի՛ տա զիս,
Կերթա մախիր՝ մոտն զիս:*

61(12). *Քյա սե, սե, սեակոր մար:* Տես ք. 33:

62(12). *Հո, ել, ել:* Վերնագրված է՝ «Սելվոր» – սայլի երգ է: Թումանյանի գրառած տարբերակում «Խորիկը» ըստ տեքերի տարբերակվում է այլ ամուններով:

63(12բ). *Հեքյար, հեքյար պապա ի:* Եղանակը կրճատ գրությունից (կրկնվող ելևէջները գրված չեն) և խոսքը ՎՍԱ/118-ի օգնությամբ՝ վերականգնեցինք: Ժամրային կարևորությունը նկատի առնելով՝ գետնից ենք մաս ԵԺ 10-ում: Տես մաս այստեղ ք. 44(2) մանկական «Արև, արև» երգը և ծանոթագրությունը:

64(13). *Լորկե, լորկե:*

65(13). *Գիճըլ՝ կլավ տաս կորուշ:* Առաջին քառն անընթեռնելի է:

գ. Շատախի երգեր, գրառված 1910 – 1914 թվականների ընթացքում այդ գավառի տարրեր գյուղերի գյուղացիներից
Զեռագիր ք. 441

66(3թ.) Հոյմար, հոյմար, մշեցի: Մակագրված է՝ «Շատախ, Թաղ գյուղ»: Այս շուրջպարի հետ համեմատելու համար բերում ենք նախորդը (թ. 65) և Ա.Մալիքյանի ու Գ.Գարդաշանի «Կանա երգեր», 2-ից ք. 59 գյուղոլոր:

Խոսքերի ու եղանակների այս զանազանակերպ մեմանություններն ու նույնությունները մեկ տեղաշարժանի (ռեզիոն) ֆուլկորում միանգամայն բնական երևույթ են: Ի դեպ, երկմասանի 4/4-ի անցումը նույնաչափի 6/8-ի (կամ հակառակը) հաճախ տեղի է ունենում մեկ շուրջպարի ընթացքում: Կարևորն այստեղ այն է, որ բոլոր եղանակներն էլ համապատասխանում են «Հոյմար» կրկնակով շուրջպարերի բնույթին: Ինչ վերաբերում է «Պուտկով փլավ եփեցի» կամ «Բիփիցի» խոսքերին, ինչպես դրանք շարադրված են երկու այլ հեղինակավոր աղբյուրներում՝ ՔՄՎ/35 և ՎԱԼ/14, ժողովրդի կողմից շատ սիրված՝ գործողության շրջապակերպ ընթացքով կառուցվող տասնավոր տարբերակներից են: Ստորև հատված ՔՄՎ/35-ից.

*Պուտկով փլավ եփեցիմ,
Տարած տվիմ խաղերում.
Խաղեր 'մի ծուս' անծնինմ,
Տարած տվիմ արքերնին.
Գարդին 'մի դամակ մ' նտոր,
Տարած տվիմ խաղերում.
Խաղիվ 'մի մարք մ' նտոր,
Մարքին արին Աստծուն մատար,
Աստված 'մի աղպեր մ' նտոր...*

67(3թ.) Ենրանկը կարաս, տեղինը կարաս (Հոյմար): Նշված է՝ «Հայոց ձոր Ձղզէ գյուղ»: Այսպիսի խոսքերով «Հոյմարը» ի գորտ է դասնում բարեկենդանին:

68(3թ.) Առնու սարը բարձր ոռահան: Ինչպես Արագածը Արևելյան Հայաստանի ժողովրդական երգերում, Առնուց ևս, Արևմտյան Հայաստանի երգերում շատ է նրավել: Նշված է՝ «Փեսանդաշտ, Շատախ»: Եղանակը հայ ճեղքով մտնելիակերտման վարպետության բնորոշ մեղաներից է՝ հինգ հնչյունով, որոնցից առաջինն ու վերջինը սոսկ ժամայնակով դիւր են տանում. փաստորեն երեք հնչյունով տևակն մեղեդիական յարվածություն է տեղծվում ձայնակարգի 2-րդ աստիճանի ուղիղաչափ տարբ. ռակման շնորհիվ:

69(4). Մանդր անձրև. Խոսքերն անընթեռնելի: Նշված է՝ «Ախթաժա, Գավաշ»: Ինչպես տեսնում ենք, երկու հնչյունով էլ կարելի է եղանակ տեղծել:

70(4). Եկեք երթանք էն մարմար քար: Ախթաժա, Գավաշ: Խոսքերից հենց այդքանն է գրված:

71(5). [Խիտ, խիտ]: Խոսքն անընթեռնելի: «Շատախ, Թաղ գյուղ»:

72(4թ.) Վիճակ, վիճակ, խաս վիճակ: «Հայոց ձոր, Կարմիրքար»:

73(4թ.) Ջան գյուլում: Շատախ: Նշված է՝ «Պուլիկը խաղացնելու ժամանակ»:

74(4թ.) Ջան գյուլում քան: Շատախ: Տարբեր մտորքի զուգորդումն այստեղ, որպես շարժում առաջ բերող միջոց, անշուշտ, սրամիտ է օգտագործված:

75(4). Աս տարի՛ տարի: Շատախ: Բարեկենդանի տոնական երգերից: Ձեռնոված է նաև ԵԺ 10/24-ում, տե՛ս ծանոթագրությունը: Բնագիրը եվրոպական նոտայով է, մեկ տոն բարձր գրված: Երգի «Հերոսների» թվարկման մեջ կան մակ մուկը, կատուն, շունը, եզը, ձիւն, առանց նոտային վերադասարկման: Այդ բոլոր երկվանց բաները շարունակության մեջ նախկին գործածված «ցորենը» բառի փոխարեն ևս պետք է հեշեն: Այսպիսի դեպքում ժողովրդական կատարողները դյուրությամբ գոյացնում են պահանջվող մոտիվի նոր, համապատասխան ռիթմական տարբերակներ, որպիսիք այստեղ բերելը չարժեք: Չնք բերում կան ողջ երգի կատարման մեջ մեներգիչ, խմբի կամ երկյակ երգի մասնակցության հնարավոր կերպերը, որոնք նույնպես տարբեր կարող են լինել: Նշենք միայն, որ առավել համդիսակորության պայմաններում երգի կատարմանը կողնկերու նաև պարային կամ ընդհանրապես շարժումային նմբատեղատ:

76(3): Քիւլ մարե: Նշված է՝ «Թուրք մանելիս պատավները կերպին: Շատախի, քայց Վանա շրջակա բոլոր տեղերը ընդհանրացած»: Գրառված է շուտակ, ոչ շատ մամբամամ ճշգրտությամբ, եվրոպական նոտայով, մեկ տոն բարձր դիրքում զետեղված է նաև ԵԺ 10/17-ում:

դ. Արևմտահայ գյուղական և քաղաքային ժողովրդական այլ երգեր, գրառված 1910 – 1914 թվականների ընթացքում

Այս ոչ ծավալուն բաժնում խմբված երգերը պահպանվել են հիմնականում տարանջատ կամ գրանցվել են այս ու այն պատահական տեղորակի որևէ ազատ մնացած տեղում: Մեծ մասամբ Կոմիտասի կոտանդնուպոլսյան շրջանի գրառումներ են՝ հաճախ հայտնի բնակավայրերով: Ինչպես արդեն առիթ է եղել ասելու, խոսքային բնագրերում բարբառային հատկանիշները պահպանված են սույլ այս կամ այն չափով միայն: Թ. 77-81-ը Կանում

աստիճանով երգեր են:

77 և 78. *Մայրամ կամփեք* (631/174) և *Կուզյամ, կուզյամ* (ԱԵ 108): Շարձական երգեր են, գետնովված են մաս ԵԺ 10: Երկրորդը քնագրում բնորոշված է մաս որպես «Պարերգ վաղիկ հայոց»: *Վշիկ* (Ուշտունի՝ ից աղակալված)՝ Ռշտունյաց և Մուկ գավառների հայերը:

79. *Մեկ խավթ' մ էմնեմ*, 324/5: Խոսքերում ոտանավորի 2-րդ տողը գրված չէ, դրա փոխարենը կրկնված է 1-ինը: «ՄԱ/54-ում «Համը դառնալու» վերաբերյալ կան հետևյալ երկտողերը՝

*Ես խավթ' մ էլա՝ էկա քառա մեր օղնեմ,
Չկշտացա էն անուշ վարդի խտոնեմ:
Ես խավթ' մ էլա՝ էկա քառ մարի տակ,
Խալառ աղբիկ անուշ քյներ վարդի տակ*
և այլն:

Գրածման վերջում հավելված է այն երկտողը, որ պատկանում է «Կարդն ի քացվե» երգին. իսկապես, երգի մեղեդին ևս «Կարդն ի քացվե» երգի եղանակի մի տարբերակն է, հնարավոր է՝ երգողի մաս տեղի է ունեցել մի քյոտրիմացություն, մեկը խանգարել է մյուսի հիշելուն:

80. *Կարդն ի քացվե*, 709 (ճերդի քերթ), 1911-ի գրառում է: Միտ հանրահայտ երգի այս տարբերակում մեղեդու երկու կրկնվող մասխաղատությունները հասկացված են ռոտանավորի երկու տողերին: Տրամաբանական կլիմեր 1-ին մասխաղատությունն իր կրկնությամբ հատկացնել ռոտանավորի երկու տողերին, 2-րդ մասխաղատությունը՝ երկտող կրկնակին: Բնագրում եղող «Շերենց, Կամա սագ» մշտնը հավանաբար հենց այդ է ակնարկում: ԺԿ 528-ում եղածը:

81. *Մուկն հավթեց կէր*: 709 (ճերդի քերթ), 1911-ի գրառում է: Տարբերակներն են՝ ԵԺ 10/140 և ԵԺ 12/202:

82. *Մարառ, ես աս գեղին ձորնեմ նեմ*, 645/23: Տեղավայր նշված չէ: ԺԿ 371-373-ում կան խաղերի՝ զանազան վայրերից բխած մեծաքանակ տարբերակներ, ինչը վկայում է խաղիկի տարածված լինելը: Կարևոր են մաս քառատողերի կառուցվածքի և, հավանաբար, եղանակի մեջ խաղերի տեղադրման կերպերի տարբերությունները:

83 և 84. *Գեղին վերև*, 314/55 (Երզնկա) և *Քեշքիլիստ ձորնեմ նկող*, 390/10, «Ձերելի գյուղից, Քեշքիլիստ մտա»: Երկուտղ երգի՝ 314/27 տարբերակի եղանակը (ԵԺ 10/170) համեմատաբար ընդարձակ է, երկու եղանակն էլ տարբերակներ են ԱԺ 1-ում եղող «Ես փրեցի՝ ուրիշն առափ» երգի եղանակի (ԵԺ 11/262): Տեքստի շարունակությունը հետևյալ է.

*– Չիմար բոլով, բույս մաղեղով սև տղա,
Թե կպիրես՝ ցնճի հետ խաղ մի խաղա,*

*Մորը որկն, մորս բովը խաղ կպակ,
Թե չէ՝ Լայնա մեր բանը շատ խարապ է:
– Սարի գլխն բեզի տեսա՝ ցած եկա,
Անքիկը չէ, քեյն երբանք ոխտա չու,
Վարդապետը Պարի դուրս կայնա է,
Պասկն օրին՝ մեր բանը դրստած է:*

85. *Եկեք տեսեք ինչն է կերի զինն*, 568: Տեղավայրը նշված չէ, հավանաբար ԵԺ 10/25, 26-ի երկու տարբերակների հետ այս ևս Մուշեղ եղած երգ է, դրանք միմյանցից շատ չեն տարբերվում: Մշակումը՝ ԵԺ 3:

86. *Լայա բարեր ծարկեր ի*, 709 (ճերդի քերթից), գրված է 1911 թվականի ապրիլ-մայիսին վերաբերող համերգային մի իրավիրատոմսի վրա, ուր գրատված է մաս ք. 97 «Մուկն խավթ' մ կէր» երգը: Հետաքրքրական է 5 և 6 լայնիքի խիստ տրամաբանված համադրությունը, որ հայ ժողովրդական շուրջպարերին քննող երևույթ է:

87. *Քաղնիցը ցուրտ է*, 314/55, Երզնկա: Խոսքերի այս քաղաղիկը արևմտահայ երգերում տարածված է, կա նաև Մ.Թումանյանի «Հայրենի երգ ու բան» ժողովածուի 2-րդ գրքում՝ ք. 119, «Քարեկենդանի երգեր և պարերգեր, Չնկվածագ»:

88. *Աշկնեմ, յո՛ր կորոսա*, 1677 (առանձին քերթիկ): Մակագրված է «Ջեյրսուցի երգ, 1910, Կ.Պոլիս, Ղարաբնակ, մաս՝ Երդ» արտասանել ձևը. ուրեմն յ-ի իսկական արտասանությունը պահպանված է Ջեյրսում: Համոզիչ է փնջիկը՝ քաղը որպես «ինչ իրք, նշիք, չիրք» մեկնաբանելը: Մաղ քվում է՝ «փնջիկը»-ը ինչ քաղի հոգնակին է՝ ինչեր նշանակությամբ, մնամ ի՞նչ և ի՞նչ-ինչ կամ զինն ու զինչ-ին: «Մեղով բուխտիկ» – մեջը լեցված քուխտա օծնծ: Մյուսգամայն ակնտուն են երգի հնությունը, ավանդականությունը և Մ.Կարապետի երգերի եղանակների մնամությունը:

89. *Պուպայ, էմերդ ծայնե*, 315/11-11բ, Օվանքը: Կա նաև 314/44 տարբերակը, որ գետնով ենք ԵԺ 10/263-ում: «Պարտիտ տեր» մնամում է պարտոց տոբը:

Հայտնի են մաս այս՝ ըստ երևույթին տարածված երգի՝ Պարտիզակում և Մկրտագրում (Բյուրանայի շրջան) Մ.Թումանյանի գրառած տարբերակները («Հայրենի երգ ու բան», 1, էջ 168-170), որոնցից մեկում կան աղջկա հետևյալ տողերը՝

*Դում ցրիր, մայրիկ, դում ցրիր,
Ակտիտեն նա ցրիր,
Գամբոց խախալին տպիր,*

և դրանք ինքն են դարձել երգը մեկնաբանելու որպես «մարդկային հարաբերությունների ըմբռնային դրամա»: Կոմիտասի գրածման մեջ մնամ տողեր չկան, և դաստիակ նրա «պարերգ» վերնագրից ու ծանոթագրությունից՝ «այս երգը երգված առեն

հանդիսակալները թուրջ կզարնեն այսպես...» (նկարված է ծախ ձեռքի թաթը ընճրված, աչք թաթը՝ քաջ, թութուշը նշանակում է հաջողությամբ մեկ և մյուս թաթը զարկել ռազմված քշերին՝ առաջ բերելով ռիթմիկ շարժում և համապատասխան աղմկային էֆեկտ) և ապարզապես խաղերը է՝ պայմանական գործող անձերով ու հանդիսակալներով և մասնավոր ու ընդհանուր պարաշինը շարժումներով: Թեև խաղի թուն բովանդակությունն ու լրիվ ձևը մեզ հայտնի չեն, քայց նրանք խաղերը լինելը երևում է մասնաբաժնի, որ առջիկը հորը հաջողությամբ առաջարկում է ծախել «կառները, եզները, ծխանը, կոճուղիկը...»: Այսպիսով, Կոմիտասի գրառած «Պուպայ, Էծերդ ծախեն» երգը պատանեկան թատերականացված խաղի երգ է:

Անա տերստի շարունակությունը, որ նշված է բնագրի վրա.

*Կոճուղի Ակոն տյուն յունի,
Կոճուղի Ակոն տյուն յունի,
Ավետիսը տյուն ունի:*

կամ՝

*Ավետիսը տյուն ունի,
Ավետիսը տյուն ունի,
Կոճուղի Ակոն տյուն յունի:*

- Պուպայ, կառներդ ծախեն...
- Պուպայ, եզներդ ծախեն...
- Պուպայ, ծխանդ ծախեն...
- Պուպայ, կոճուղիդ ծախեն...

90. *Օ, Շարարո*, 469 9, տեղավայրը նշված չէ: Տե՛ս այստեղ «Օ, տալ Ակո» երգը՝ ք. 36, և ծանոթագրությունը: 6-րդ տակտում որպես երկրորդ ձայն գրվածը հավանաբար նվագակցության տարր է, որ նվագարանների քաջակալության դեպքում կարող էր կատարվել երգական ձայնով:

*Նւմշուներ արևմտահայ և արևելահայ
քաղաքային ժողովրդական երգերից:
Տե՛ս հատորի Նախաբանը:*

- 91. *Արևեք առաջին*, 329:
- 92. *Իզմիմիտին ճամբան քարոտ է*, 329/3:
- 93. *Միմավոնին տունը*, 329/4:
- 94. *Պախանն ֆիշնեն քսեր է*, 329/5:
- 95. *Առանց խոսքի*, 727/8:
- 96. *Առանց խոսքի*, 727/9:

Առաջին չորս երգը գրված է նվորդական մուտայով առանձին թերթերի վրա, քանաքով, մաքուր, միամասն հատուկ խմամբով: Ըստ երաժշտագետ Ա. Քուլարյանի գրավոր տեղեկություն՝ Կոմիտասը «ծայնագրել է պրոֆ. Հր.Աճառյանից... հանձնված է

(երաժշտական գիտահետազոտական) կարհնետին Աճառյանի կողմից 1941թ. հունիսի 27-ին»:

Պրոֆ. Աճառյանը Կոմիտասի մասին գրելիս հիշատակել է՝ «Իբրև սիրահար երգերի, ձայնագրում էր ամեն մի նոր երգ, որ չէր լսած: Ինձձից ձայնագրեց պոլսահայ ժողովրդական երգերը և օրորոցի երգը, որ մայրս երգել էր ինձ վրա» («Կյանքիս հուշերից», Ե., 1967, էջ 209): Այդ չորս երգերի խոսքերը իսկապես մաս են կազմում Հրաչյա և Որս քուր Արմենուհի Աճառյանների ֆաներով 1890-ից սկիզբ առած «Պուստահայ ռամկական անգիր քանակիտության հավաքածու»-ի, որ տպագրվել է «Ազգագրական հանդեսի» 1902թ. ք. 9-ում (էջ 160-196): Այստեղ «Ժողովրդական երգեր և օրոր» վերնագրի տակ տպագրված են վեց երգի և մեկ օրորի խոսքերը, և Կոմիտասի գրառումներում նրա ձեռքով լրված համարների համապատասխանում են Աճառյանի տպագրած երգերի համարներին, մնալով թե պահպանված ձեռագրերում ք. 2 և 6-ը (որոնց եղանակներն, անշուշտ, մույնպես գրառված են եղել) պակասում են, չեն հայտնաբերվել: Ապագա փնտրումներին անկասելիով, մակն բեղքեր հասկանալի այդ պակասող երգերից՝ ք. 2-ը «Ցատկե, Լուսիկ, ցատկե, կերտանդդ պագնեմ» կրկնակով երգ է, 1-ին տան խոսքերը՝

*Մա դիմացի պախանն ինք կլլմանի,
Մեքի պղտղուդը քուրս կլլմանի.
Անկամին օղիդ ինք կլլմանի,
Մատին մատանին ա մորսը (յարքս)
կլլմանի:*

Թ. 6-ը «Աշխատեցք, ախմիկներ, հարս լլլալու տարի է» կրկնակով՝

*Չարդը մը ունի՝ կանանչ է,
Մեք տոփ-տողու մանչ է,
Ըսախին քարի պան յէ,
Կիմին ա խան, խաղ կանչ:*

Ինչ վերաբերում է «Օրորոցի երգին», Կոմիտասի դիվանում հատկապես Աճառյանից գրառած կամ հատկապես պրոլսահայ այդպիսի երգ մույնպես չի հայտնաբերվել. կամ առանց խոսքերի հայտնաբերված օրորների եղանակներ (գետնով ենք Եժ 9-ում), քայց դրանք ոչ մի կերպ չեն համապատասխանում Աճառյանի նմուշին, որի խոսքերն են՝

*Օրոր, օրոր, օր,
Մանյա օրոր օր,
Քուն ունի, քուն ունի,
Մանյա քուն ունի,
Ենի, խախտն տուն ունի,
Ոսկե յախյախներ ունի,
Արծաթե յախյախներ ունի,
Մեք պատկեր քուն ունի:
Տար ու պեր, տար ու պեր,
Հովերն ալ տար ու պեր,*

Իմ գառնուկիս քունքն ամ տն պեր:

Որ վերը թվարկված չորս երգերը Կոմիտասը գրել է հատկապես իր ընկերոջը՝ Անճառյանին հանձնելու համար և այդ պատճառով է, որ գրել է եկրոպական մոտայով և հատուկ խմանքով, դա հասկանալից վեր է: Կոմիտասի և Անճառյանի կենսագրություններից հասկացվում է, որ այդ երգերը Կոմիտասը գրառած կարող էր լինել 1901- 1902 թվականներին Էջմիածնում:

«Արևեք ատաքին» երգի խոսքերը մի երկարաչունը ուսանավոր է, որ կարելի է գտնել շատ երգարաններում, սկսած ամուկազն «Քննար հայկական»-ից (Պետերբուրգ, 1868, էջ 380), որտեղ այն գեղեղկած է «Մանուկ», ուրախության... երգիծական երգերի»¹ բժում այբուբենի ակրոստիքոսով և վեցատող տնեղով կառուցված, այդ օրերի հայկական ուտելիքներից, խմիչքներից ու ընդհանրապես ուտել-խմելուն միլիթված գովեր է՝ անշուշտ համեմակած հուժուրի տարրերով: Անճառյանի տարբերակն անվանված է «Կի՛նով Հակոբին խաղը կամ կերակուրներու երգը» և օժտված է հետևյալ ծանոթագրությամբ՝ «Այս երգին հեղինակը պիտի լինի ո՞նց Սամաթիացի գինեպան Հակոբ, ինչպես ինքը... կեի՛ն իր ամուլը 11-րդ տան մեջ»²:

«Մարավայրս Օրմանեզի, աղբոսեց վասն Հակոբի», Օրմանեզ՝ մշամավոր գինետան մը անունն է Սամաթիո թաղին մեջ»: Մինչդեռ «Քննար հայկական»-ում (էջ 385) կա այլ ծանոթագրություն՝

«Հարյուր տարվա երգ կհամարվի, հեղինակություն Միքայել սարկվազի, «Բազմավեպ» 1866 թ., երես 20-22»: Երկու շարադրությունները լիակատար նույնական են միայն 1-ին տնեղում, սակայն մյուս տների տարբերությունները միանգամայն ամբողջ բանահյուսության մեջ համեղիպող սահմաններում են: Որևէ երկի նոր գրչագրում հեղինակի կամ գրիչի անվան տեղ մի նոր անուն դնելը ընդունված է եղել և, հավանաբար, տեղի է ունեցել այս դեպքում էլ:

Պետք է սասել՝ «Արևեք-Արևմուտք» երգի այստեղ տպագրվող եղանակը ևս զուրկ է հուժուրի տարրերից (պարոդիա), որում դիտարկելով մեջբերված են ասկետական կյանք վարող եկեղեցականների երգեցողությունից ինչ-ինչ ելևէջներ:

Մյուս երեք երգերը մեղ առումով տեղական-կենցաղային են՝ պարագայական:

«Թզնիմոխիմ մանրան», ուն տոբթորի հետ կապված կամ նրան սիրահարված աղջիկ Աղավկին այդ պատճառով «օրթան է մնացել», մարդկանց այսից ընկել և արժանացել է ծաղր ու ծանակի:

¹ Մոխից օգտվելով՝ ուղղում ենք այս կապակցությամբ ԵԺ 5-ի 173 էջում գեղեղկած դիտությունյան մեջ ստրոֆան սխալ. մեր դիտությունը Անճառյանի ակնարկած օտոբիոգրի երգի մասին է եղել և ոչ թե ընդհանրապես պոլսասայ երգերի:

ստորև մի լրացուցիչ հատված Անճառյանի գրառած խոսքերից.

Ենթանկ ֆիստան հազար, էլար վ'ն'ր կաջր,
Իզնիմոխիմ ժամը պատկնը կաջր:
Չինկանենն աաիքը ծուկին ըսխատան,
Աղավկին եղեր է գեղին մասխատան:
Ըստամոլոնն աաիքը թետանը դգալ,
Աղավկին ծիղը թուտուն-վիդրոգալ:
Պատին ծակեն էլակ կոտուշը օժը,
Աղավկին պատկեր է տորթորին ծոցը

և այլն:

«Միժավոնին տունը» երգում այդ տան առաստաղը (թավաղը) կամ ծածկը «թորից է» (ուստի և մատչելի է), իսկ Հոտոփը (Հոտոմսիմ), որ սիրահարված է տանտիրոջը, ինքն ինքն հավան է, իր գլխի տերն է: Եվ երբ ապագա խնամիչները գնում են նրան նշանելու մեկ ուրիշի՝ Գեղորի համար, աղջիկը մեղմուն է այդ հարանխոսությունը և այդ պատճառով արժանանում է «Էտեփսիգ», այս դեպքում՝ «ամանոթ» անվանարկմանը.

Քատասուն-իծուն հոգով.
Հարս ամուլ կաջինք,
Ան Էտեփսիգ Հոտոփը
Տառը չի պագավ...

«Պախանն ֆիշենն թսեր է» երգի բերված տունը, ըստ երկուսրից, վիշաբերական իմաստ ունի: Մ.Թումանյանի գրառած նույն երգի խոսքերում (Արև տանի և Աբարկիլի տարբերակներ) այդ տան կենցաղային թուվանդակությունն ավելի ցայտում է:

Բաղչան ֆիշենն հասեր է,
Շամչկն, տրղան մըսեր է.
Ալքը բոճան ամ մորը
Հարսին պագմեղ տեսեր է:
(«Հայրենի երգ ու բան», 2, էջ 177):

Անճառյանի տեքստում մյուս տնեղը պարզապես սիրո կանչ են՝

Ախճիկ, մազը հյուսերի,
Թաշի երեսիլ ըքսի,
Էլչալի վարդին ծաղը՝
Պուկպուլի պես խտսի...

Անշուշտ, այս երգերի պարագայական լինելը չի արժեզրկում դրանք, որովհետև դրանցում դրսևորված «իրադարձությունները» տիպական եղելություններ են, այս ու այնտեղ հավերժ կրկնվող:

Եղանակներով երեք երգերն էլ շատ հեռու չեն Թուրքիայի հայաբնակ թաղաքներում ապրած հայերի երգացանկի այն եղանակներից, որոնք տվորաբար թրջերենն բառով անվանվել են շարքի: Վերջին երկու եղանակներում հայ ժողովրդական երաժշտության ծայրակարգային հատկանիշները

կարող էին ավելի պարզ արտահայտված լինել: Բոլոր դեպքերում այդ երգերը, որպես Թուրքիայի հայաբնակ վայրերում ապրող հայերի գաժառոտական-կենցաղային բանահյուսության և երաժշտության հին և բնորոշ նմուշներ, մի առանձին արժեք են պահպանում:

Արթին երկու նմուշներն ավելի վաղ գրառումներ են՝ իրականացված Գեորգմիայի հայ ուսանողական շրջանակներում, Կոմիտասի ուսումնասիրության ընթացքում: Դժվար է պնդել՝ երգային՞, թե՞ մկագային հատվածներ են:

97. «Հարցը բացվել է ծաղկոցին, Ան 82, Հե 349, տե՛ս նաև 352 թ. 19: ԵժՎ 198-ում այս եղանակով Կոմիտասի ստեղծած խմբերգերը ծանոթագրելիս մենք մշտ ենք, որ ժամանակին շատ տարածված հայ քաղաքային-ժողովրդական երգ է՝ սազանդարական բնույթի եղանակով, որն ավելի լայն արևելյան, մասնավորապես համասնդրկովկասյան երաժշտության երանգ ու տարածում ունի: Այստեղ ավելացնենք, որ Անդրկովկասից դուրս էլ, Հարավսլավիայից ու Բալկանյան երկրներից Թուրքիայի վրայով մինչև Միջին Ասիա, մինչև Տաջիկստան, մի ամբողջ շարք ժողո-

վուրդների ֆոլկլորում այդ եղանակն իր այս կամ այն տարբերակով առկա է, և սա «բաֆառական մեդեդիներ» կոչվող երևույթի մի բնորոշ օրինակ է:

Մի շարք քույր և այլազգի թուրքաբան երաժիշտների կարծիքով այդ եղանակի հայրենիքը Ստամբուլն է՝ Կոստանդնուպոլիսից, ուր այն երգվել է «Յուսկուտարա գիդեր իբեն ալիի դա բիր յադմուր» տաղով սկզբից ոտանավորով, որի հակիրճ բովանդակությունն է. նորածն հագված մի գրասենյակային քարտուղարի (= ժամանակի մի «ջենտլմենի») և քարտուղարուհու սիրաբանություն է և, դրա հետ, այն ժամանակվա Ստամբուլի անճրկի ու ցեխի և քնակիչների պահպանողական սովորույթների մի «նուրբ ու բարի ծաղր»: Երգը կոչվել է նաև «Քաթիբին» (թրք. Katib՝ քարտուղար գործավար): Այս բովանդակությունը հինք է տվել ոտանավորի, և ըստ իս՝ երգի գոյացումը վերագրել Դրիմի ռուսական պատերազմի շրջանին (1853 - 1856) կամ դրան անմիջապես հաջորդած տարիներին, երբ ոտանավորում ակնարկվող հագուստանը մոդայիկ է դարձել:

Երգի եղանակը հետևյալ տեսքն է ունեցել.

M.Serisoom, Furtan Selar, Ankara, 1952, Լթ.85

Նույն մասնագետների պնդումով այս եղանակը, ինչպես և ընդհանրապես ստամբուլյան երգերի եղանակներն իրենց ոճով ոչ թե ռուս թուրքական ժողովրդական են, այլ ակնհայտորեն կրում են արևելյան դասական երաժշտության (նկատի է առնվում վարպետ երգահանների երաժշտությունը) գրեթե ազդեցությունն ու հետքերը:


Հրատարակված մեզ մասյալի նյութերի սահմաններում ձեռնարկվող համեմատությունը լիովին հաստատում է թուրք երաժշտագետների այս կարծիքի արդարացիությունը: Ավելացնենք միայն, որ Կոստանդնուպոլիսի եղանակներին հաստուկ, թուրքական ժողովրդականից տարբերվող այդ ոճի առկայությունը պետք է բացատրվի մերձարևելյան այդ «մայրաքաղաքի» քնակչության մշտապես խիստ

բազմազգ լինելով, և այդ ոճի ստեղծողները պետք է ճանաչվեն նաև 19-րդ դարի և 20-րդ դարսկզբի մշամավոր հայ երաժիշտները, որոնք մինչև այժմ էլ Կ. Պոլսի կենցաղում տպագրվում ու հնչում են:

Ասկայն, մեզ բխում է, որ խնդրոց առարկա եղանակը իր ծագումով ավելի հին է, քան «Քաթիբին» երգը. այսպես, եթե այդ երգի՝ Ստամբուլից դեպի Բալկանյան երկրները (Դրիմի պատերազմի շրջանում) տարածվելը մի բնական ընթացք էր, ապա մույն եղանակի տաքիական տարբերակի երևան գալը (որը մույնպես շատ հին է) այդ պատերազմի հետ կապ չէր կարող ունենալ: Ստորև հատված տաքիական «Մուս» երգից, որը քննարկվող եղանակի տարբերակներից կարող է համարվել.

Այս օրինակը մեզ հիշեցնում է մահ այն իրողության մասին, որ «փախաական մտերիները» այս ու այն կողմ տարածվելով, որպես կանոն, տեղական ինչ-ինչ գունավորում են ստանում (ասպես մեր հայ տաքիկական տարրերակը որոշակիորեն հարմարեցված է տեղական ժայնակարգային մտածողությանը): Այս կապակցությամբ պետք է շատեստենք նույն եղանակի՝ հայ ժողովրդական և

հոգևոր երաժշտության ձևերով զարգացած այն տարրերակը ևս, որ եվրոպացի ֆոլկլորիստ ֆոն Լուչանը 1901-ին գրի է առել Այնթապում բնակվող հայ պատանի երգիչ «Ավետիսի որդի Ավետիսից» (հրատարակված է «Zeitschrift für Ethnologie» հանդեսում, ր. 36, 1904, 247): Ավետիսն իր «թարմ ու պայծառաշունչ ժայնով» երգը բուրբերեն կատարել է յուրատեսակ տեմպերացիայով: Դա հետևյալն է՝



Իսկ ե՛րբ է նույն եղանակը երևան եկել հայերեն, ի դեպ, այն արժեքավոր խոսքերով, որպես հայկական քաղաքային ժողովրդական երգ:

Այս հարցին սպառիչ պատասխան տալն առայժմ դժվար է: Ընդհանրապես այդ երգի հետ կապված կոմիտասյան նյութերն են՝ 1892-ին Ջյուրիսիայում ոմն Նևրեսե Գրիգորյանի երգածից նրա ժայնագրածը, որ բուրբերեն «Յուսկյուտարդան կիտերի» խոսքերով է՝ 352, ր. 19, և նույն ժամանակներում Էջմիածնում Ռ. Պատկանյանի «Վարդն է րացվել» խոսքերով Կոմիտասի իրականացրած քառածայն ներդաշնակումը ԱԵ 182 և ՀԵ 13, մեր տված հարցին սպառիչ պատասխանելու դժվարությունն այն է, որ Ռ. Պատկանյանի մնաց ռոտամակրները, որպես կանոն, հրատարակվելուց հետո անմիջապես երգի են վերածվել, իսկ Պատկանյանի այդ քանաստեղծությունը տպագրվել է ճիշտ Ղրիմի պատերազմին հաջորդած տարում՝ 1857: Նրանք նույն եղանակով երգել են մահ հայ ժողովրդական «Լոյս է արդեն, շուտով պիտի ծագե արեգակ» ժողովրդական երգը և աշուղ Ֆիգալիի սիրային երգերից մեկը: Բոլոր դեպքերում այս երգի՝ հայ երաժիշտների պատկանած տարբերակները մեծապես լրացում են հետաքրքրական այդ պորտեմի նյութերում՝

98. Արևն իբրև սարի գլխում: Ինքնագիր Մ.Բարայանի թղթերում:

99. Իմ հայրենյաց հողի Վարդան, ԱԵ/109, ՀԵ/47, 442/24, 27:

100. Մայր Արարսի ակներով, 394/3 ր, 472/1, 2:

101. Ես լսեցի մի անուշ ժայն, 498:

102. Թող ըլլու չեղք, 393/33, 472:

